



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

# ԱՐՅՈՒՆԿԻ ՀՈՎԻՏԸ

Դրամայ չորս գործողութեամբ

Բագուի հայոց  
հրատարակչական ընկերութիւն

1907  
ԲԱԳՈՒ

„ДОЛИНА СЛЕЗЪ“

Драма въ 4 д.

А. Азарянъ.

БАКУ, ТИП. „ТРЕДЪ“.

ՏՊԱՐԱՆ „ՏՐՈՒԳ“



14 JUN 2005 19 NOV 2010

Մ-42

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

# ԱՐՅՈՒՆՔԻ ՀՈՎԻՏԸ

Դրամայ չորս գործողություններ

3971

815

219

Բագուի հայոց  
հրատարակչական ընկերություն

1907  
ԲԱԳՈՒ

„ДОЛИНА СЛЕЗЪ“  
Драма въ 4 д.  
А. Агаронянъ.  
БАКУ, ТИП. „ТРУДЪ“.

Տպարան «ՏՐՈՒԿ»



5.02.2013

18383

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- ԱՍԼԱՆ. Ճամբորդ:
- ՀԻԻԲԻ. Նրա աղջիկը:
- ՓԷՐԻ. Պառաւ կին:
- ՆԱԶԷ. Մրա հարսը՝ ջանիլ այրի:
- ՇՈՂԻԿ. Նագի աղջիկը՝ սաւ-սասներկու սարեկան:
- ԲԱԲԿԷՆ } Աւրանի խորհրդակից բնկերները, առաջինը՝
- ՍՈՒՐԷՆ } ջանիլ, երկրորդը՝ սարիճով:
- ՌԷՍ-ՄՆՑ. Վարսուն սարեկանից անց:
- ԶԻՆՆԻ. Խենթ պառաւ:

Գիւղացիներ, կանայք, աղջիկներ, եղբրամայրեր, գուժկաններ:

Գործողութիւնը կատարուում է լեռնային գիւղում, դղեակի շուրջը:



3558-2002



## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսաբանը ներկայացնում է մի լայնարձակ հովիտ եզերուած լեռներով ու բլուրներով: Հեռաւոր հարիզոնի վրայ՝ մի ժայռոտ բլրի կասարին երեւում է հինաւուրց դղեակը: Նրա քարաշէն ու ասամնաւոր պարիսպներն ու աննոռնի բուրգերը բարձրից կախուած են մռայլ ու անհամբոյր տեսով եւ համբ սարսափով իւրտում են Երջակայքի վրայ: Դղեակից աջ ու ձախ անդնդախոր ու անհառապաս ձորեր: Դղեակի ստորոտից դաշտերի միջից անցնում է լայն, գալարուն նանապարհը, որ կորչում է մի խղճուկ գիւղում: Ճանապարհից դեպի աջ՝ մի բլրի լանջի վրայ, գիւղական գերեզմանատունն է բազմաքիւրքաւ շիրիմներով: Անտառներից դեպի վար՝ դեպի նանապարհն է հոսում մի վտակ եւ նրա ափին բարձրանում են երկու սգաստեւ ուռնեհներ, երկուսն էլ ծեր ու կայծակնահար, բայց էլի կախուած ուսեր ունին, որոնք տխուր հովանի են անում: Երեկոյ է. արեւը մեղմիւր քաւում է լեռնակասարներից եւ շողերը հոգեվարքի գունաս ժպիտ ունին:



## ՏԵՍՍՐՍՆ ԱՌԱՋԻՆ

Դեպի գիւղը սանող նանապարհի վրայ յայտնում են Ասլանն ու Հիւրին յոգնած քայլուածքով եւ քեւանցով:

**ԱՍԼԱՆ.** (Ձունափայտին լենուած ու ձեռքը ծակատին դրած՝ նայում է հեռուն, շրջակայքին, դղեակին ու մի առժամանակ մտածկոտ) Ի՛նչ երկար է այս նանապարհը ու ինչ ամայի, եւ լեռոյ՝ այս արձակ բնութեան մեջ օղբ հիւանդ է. նստե՛նք այստեղ մի փոքր, ա՛ղջիկս, անա երկու ծառ, սարիների բեռի սակ յոգնած են ու նդակոտ, կայծակները լիզել են նրանց ուսերը, բայց էլի հովանի ունին: Մե՛ծ նանապարհին տնկուած ծառը աստուածային բարիք է. նա ապաստան է թախ բուռնաւեր քոչուններին եւ անապաստան ու վտարանդի նամբորդներին: Մի փոքր նստե՛նք այստեղ, գա՛ւակս, գիւղը հեռու չէ, կը հասնենք: (Նստում է ծառի տակ):

**ՀԻՒՐԻ.** (Տեղ բռնելով նրա կողքին) Յոգնեցի՞ր... խեղճ հայրիկ, ես էլ միտք քեւիցդ եմ քաւ ընկած. դու այնպէս յոգնել ես, երկար քայլեցիմք. քոյ նակասիդ քրտնէր արքեմ, ինչպէս քրտնած ես (սրբում է) ա՛յ, որ այն գիւղը հասնենք, դու մի լաւ կը հանգստանաս, տես ինչպէս քրտնած է, Տեր Աստուած: (Հստում է գիւղական զանգի ծայնը) Զանգի ձայնը, զանգի ձայնը... (ականջ է դնում յափշտակուած):

**ԱՍԼԱՆ.** (Անուշադիր և երագուն) Որպէս երագներ կորած մանկութեան, գիւղական զանգի լալկան մոմունջներ, եւ այս լեռներն ու այս վտակը, ե՛ւ անտառներն ու այս ձորակը ցաւոտ յոյգերով սիրտս են աղմկում: Աղօտ յուշերի յոգնած կարաւան, որ լուռ հանգչում էր հոգուս խորներում, նոր ոտքի ելած՝ անցնում է դանդաղ աչքիս



առաջից՝ ցաւի, արցունքի իր հին բեռներով: Եւ այս դղեալը... մնայլ ու դաժան այս գործ զանգուածը, որ պէս հին օրերի բունոս ու սեւ վերք, վերստին մխում է այս խեղճ կրծքիս սակ. դարձեալ... նոյնն է, նոյնն է... Հիւրի, զաւակս, դու լաւ ես տեսնում հեռուն, այնպէս չե՞...

**ՀԻՒՐԻ.** (Նայելով հեռուն ու շրջակայքին) Հայրիկ, հայրիկ, ես տեսնում եմ լալկան ու սանջուած հովիտը, որ հոգեվարք հիւանդի պէս հեռում է երեկոյեան քախձոս մեռելի մեջ. եւ արեգակը՝ որպէս երկնքի հսկայական աչքը, լացից կարմրած, արիւնակալած ու սոսկումից անթարք՝ գնում է ծածկուելու լեռների քիկունքին: Վերջապէս մեռնողի վերջին ու գունաս ժպիտն է, որ մարում է անդարձ. հայրիկ, այս հիւանդոս երկնքի սակ խաւարը սոսկում է բերելու:

**ԱՍԱՆ.** (Միշտ մտախոհ ու երազուն) Հայ, զաւակս, խաւարը սոսկում է բերելու, ամեն ինչ սգուր է այստեղ:

**ՀԻՒՐԻ.** Նայի՛ր, հայրիկ, խոտերը կռացել են ու կծկուել իրար վրայ ու փսփսում են մեղմիւ. նրանք վախենում են նայել երկնքի չուած, արիւնոս աչքին, ծաղիկ չ'կայ. լսո՞ւմ ես հիւանդ սողունների ու միջատների մեղմ նվվոցը. վսակը հոսում է ու գալարում՝ ինչպէս ձանձրացած, իստուր օձ, որ հանգիս է փնտրում խոնաւ փերի սակ, եւ բոլորի վրայ վերջապէս է մեռնում հոգեվարքի անփայլ ժպտով:

**ԱՍԱՆ.** (Մտախոհ) Վերջապէս մեռնում է անժպիտ, ծառ ու ծաղիկ, խոտ ու վսակ դողում են մօտալուս խաւարից:

**ՀԻՒՐԻ.** Եւ այն գիւղը... վախեցած սողունի պէս կպել է գետնին՝ դժգոհ ու անհանգիստ, որ ծածկուել չի կարող երկրի սակ. ո՞ւմից է քաղնում: Խրնիքները գերեզմանների նման գործ ու մնայլ իրար են սղմում եւ արեւի յետին ցոլքերը՝ մեռնող աչքերի վերջին փայլի

պէս դողողում են նրանց վրայ. սաս՛, հայրիկ, բնակարաններ են քե՞ դամբարաններ:

**ԱՍԱՆ.** Ե՛ւ բնակարան, ե՛ւ դամբարան, զաւակս, երկուսը մեկ է, երբ մարդ սպրում է ու չէ սպրում:

**ՀԻՒՐԻ.** Քոչունների մի շարան անհանգիստ ու մոլոր անցնում է երկնքով գոյց ու անձայն. ապաստան են փնտրում, քանի վերջապէս իսպառ չի մեռել, խաւարից են փախչում, այնպէս չե՞ հայրիկ. տես՛ ահա հասան անտառին, երեւի կիջնեն, կը քառեն. ո՛չ, իրար անցան, պոչներ են գործում, վախենում են իջնել. անտառի ծառերը ողջ մեռած են ու անուարձ. նրանց վրայ սոսկումն է կախուել, քառացել են ինչպէս վնասների կախարհուած պարսիզում. ո՛չ մի բոչուն չիջաւ այնտեղ, փախան զարհուրանքով հեռու՛, հեռու՛:

**ԱՍԱՆ.** Հայ, զաւակս՝ քափառիկ բոչունները դողում են խաւարից ու մեզ պէս ապաստան են փնտրում: Այնտեղ անտառում, ուր բունաւոր օձերն են սողում եւ նիւաղներն են եռում, բոչունները չեն իջնի:

**ՀԻՒՐԻ.** Եւ այս դղեալը... հայրիկ, հայրիկ, ո՞վ է այնտեղ. դու շարունակ նրան ես նայում. տես քառերը երես ունին ու աչքեր, ծումում են դեմքեր՝ հեզանով արեւի շողերն ու անհամբերութեամբ խաւարին սպասելով: Հայրիկ, տես, տես, բուրգերը պարում են լեռան կասարին եւ հրեւների պէս աննոսի երախները բացած, ծանիփները ցից, լեզու են ցոյց տալիս երկնքին: Եւ երկիւնքը կարմրեց, տես ինչպէս կարմրեց երկիւնքը. արիւն ցանցին նրա հակասին, խոտը բռնով լիքը արիւն. ո՞վ ցանց արիւնը, հայրիկ, այդքան արիւնը ո՞րտեղից է երկնքի հակասին:

**ԱՍԱՆ.** Այդ գայլոյթից ու անօթից է կարմրում երկիւնքը վերջապէսին՝ ողջ օրուայ իր տեսածների համար: Ամեն մի դղեակում միշտ մի ձեռք կայ հզօր ու անողորմ,



որ սիրում է ցանել է՛ւ արիւն, է՛ւ արցունք, լիք լիք բռներով երկնքի նակասին. սառապող անմիտներն իրանց քերթուած քիւնոններով բարձրացնում են արիւնոս բուրգերը եւ իրանք սողում նրանց ստորոտներում՝ որպէս նիւնուներ. վերելում լկտի նոխուրեան մեջ միլիոնների արիւնն ու քրտինքը լափելով հրնում է զազիր բռնութիւնը: Նրա կարմիր գառանցանքից կարկրում են ոնիրները աշխարհի վրայ եւ բուրգերը դիւական քրտնով բռնում են երկնքի նակասին:

**ՀԻՒՐԻ.** Հա՛յրիկ, այս ո՞ւր ենք մենք... սես հեռուն այնտեղ՝ ուր երկինքն ամենից առաջ մրնեց, ինչպէս մի սել վերք, շարան շարան հողաքմբեր, որպէս երկրի կրծքին մի խորունկ ցաւից բարձրացած պալարներ. եւ քանի՛սն են... գերեզմաններ... գերեզմաններ... բոլո՛ւր մխում են... *(գերեզմանների կողմից լսում է խուլ լացի ձայն, անբոց ու մեղմ հեծկտանք, որ երեկոյեան հովի թեւերով տարածում է շրջակայքի վրայ. Հիւրին ականջ է դնում և քաջականչում լափշտակումներ)* Հա՛յրիկ, ձայները... ես լսում եմ ծանօթ ձայները, նրանք հնչում են երկրի խորքից, ականջ դիր, այն երկիրն է սնում ահագին ցաւից, ո՛ւն այդ ձայները... *(գերեզմանների կողմում ստուերներ են երեւում)* սես, հա՛յրիկ, նրանք դէպի մեզ են գալիս, մեկը՝ մեծ, միւսը՝ փոքր. մեռելների ուրուականներ են, ոգիներ՝ քե՞զ կենդանի արարածներ:

**ԱՍԼԱՆ.** *(Ձեռքը ծակատին դնելով)* Հա՛, դէպի մեզ են գալիս:

**ՀԻՒՐԻ.** Ահա, ահա, մի պառաւ ու մի փոքրիկ աղջիկ, մօտենում են, նրանք էլ են վախենում, սես փոքրիկն ինչպէս փարաքում է մօր փեշերին, երկունս էլ սեւազգեստ, խեղճ, ի՞նչ վսիտ է այն փոքրիկը, վսիտ ու գունաս է այն աղջիկը, իսկ պառաւը, նրա դէմքը, ինչե՛ր կա՛սք նա, եքե խօսեցնես. նա այն համր ուրաւականներիցն է, որոնք գերեզմանների գաղտնիք գիտեն... եւ լուռ են...

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

*(Յայնուում են Փերին ու Շողիկը, երկունս էլ սեւազգեստ).*

**ՇՈՂԻԿ.** *(Փէրիի փեշից բռնած վախով)* Տեսա՞ր ասիկ, կուռնկներն անցան երկնքով եւ չըկողացին:

**ՓԷՐԻ.** Նրանք վախենում են կողալ, բա՛յիկ. եքե կողան, լաւ չի լինի, պէտք է սուս եւ զգոյշ անցնեն այստեղից, երբ հեռանան՝ կը կողան, դու էլ սուս կաց, անցնենք շուտով *(վախով նայում է դղեակին):*

**ՇՈՂԻԿ.** *(Վախեցած կծկում է ստորի փեշերին)* Նրանք այն կոյր կուռնկներն էին, ասիկ, որ դու ասում էիր, քե փնտրում են իրենց ձագերին, ասա՛ ասիկ, ինչո՞ւ են կուռացել եւ ո՞ւր են նրանց ձագերը:

**ՓԷՐԻ.** Սուս, սուս, բա՛յիկ. երբ տուն հասնենք, ես քեզ կը պատմեմ. հիմա շուտ գնանք, քանի մուրք չի բնկել:

**ՇՈՂԻԿ.** Ես վախենում եմ նրանից, *(ցոյց տալով դղեակը)* ես շուտ եմ վախենում ասի, ասա, ասա ջան, ո՞վ է ապրում այնտեղ, ես այնպէս վախենում եմ ասի:

**ՓԷՐԻ.** Վիշապը, բա՛յիկ, մեծ վիշապը, եկել է ու բռն դրել այնտեղ, մարդիկ է սանում, աղջիկներ է փախցնում:

**ՇՈՂԻԿ.** Փոքրիկ աղջիկ էլ կը սանի, ասի, ես վախենում եմ, *(կծկում է)* ինձ էլ կը սանի, ասի՛, ասի՛... ես շուտ եմ վախենում. էլ ինձ չքերես այստեղ:

**ՓԷՐԻ.** Ձե, մասաղ, փոքրիկներին չի փախցնում. մեծերին է փախցնում, դու մի վախենալ, բա՛յիկ:

**ՇՈՂԻԿ.** Հայրիկն է՞լ նա սարաւ, հա՞, ասիկ:

**ՓԷՐԻ.** Հա, բայիկ, հայրիկն էլ նա սարաւ, ասի՛րի հայրիկն է սարել. գնանք, գնանք հեռանանք այստեղից շուտով:

**ՇՈՂԻԿ.** Տասի, սես այնտեղ մի մարդ ու մի աղ-



ջիկ, նրանք չեն վախենում, նստել են ուռիների տակ:

**ՓԷՐԻ.** (*Նայելով Ասլանին ու Հիւրիին*) Բա՛րեւ ախպեր, ո՞րտեղից եք գալիս եւ ո՞ւր եք գնում:

**ԱՍԼԱՆ.** Ասածու բարին, մա՛յրիկ, դարիք նամբորդ ենք, հեռուից ենք գալիս, յոգնեցինք, հանգստանում ենք. յետոյ էլի կերթանք, կերթանք, մինչեւ մի ասուածասեր իր դուռը բաց անի մեր առաջ. դարիք նամբորդ ենք, մայրիկ, դարիք նամբորդ:

**ՓԷՐԻ.** Ճամբորդի վրայ Ասածու հովանի կայ, ախպեր, բայց Ասուած վաղուց է բողել եւ աշխարհը, ուր նա էլ նայել չի կարողանում առանց ամօրի ու կարմեյու: Արեւը մայր է մտնում, հրէն գիւղը, երբ հասնեք, Փերիի տունը հարցեք, նզովքը բուխս է նստել Փերիի տան վրայ, բայց էլի մի անկիւն կայ անապասան դարիքների համար. մենք էլ դարիքի տեղ ենք, բող Տերը հասնի բոլոր դարիք-կուրբաքներին. հա, ախպեր, երբ հասնեք, Փերիի տունը հարցեք, միայն շուտ հեռացեք այստեղից. լա չի, որ այստեղ երկար մնաք, ջահիլի տեղ ես, ի՛նչ սիրուն աղջիկ է, հա, շուտ հեռացեք, այս ուռիներն այնքան են լաց եղել, այնքան սգացել իրանց տակը ու պահուն հանգիստ առնողների համար. տեսե՛ք, (*ցոյց է տալիս դղեակը*) վիշապի որջ է այն:

**ՀԻՒՐԻ.** Մայրիկ, մայրիկ, ձեր գերեզմաններն ինչո՞ւ են մխում:

**ՓԷՐԻ.** Այն խունկի ծուխն է, զաւակս, բոլորը բարմ են, հողերը՝ քաց, խունկ ծխողները՝ շատ եւ խնկի ծխի հետ մեռելների ցարը մխում է, բարձրանում, դարդոտ մեռելներ են բոլորը, ո՛ւր, ո՞վ դարդոտ մեռել չունի մեր աշխարհում. ես էլ խունկ ծխեցի. ամեն կիրակնամուտ այս փոքրիկի հետ գնում եմ իմ զաւակի՝ արահոր գերեզմանի վրայ խունկ եմ ծխում եւ Շողիկիս ոտները լուանում. վախեցել է խեղճ երեխաս եւ մաւում է, մաւում է, գիշերները նշում է, ոտները լուանում եմ, զուգեք Ասուած հասնի:

**ՇՈՂԻԿ.** Ես շատ եմ վախենում, հայրիկիս վիշապը տարաւ, ես վախենում եմ, տաս լուանում է ոտներս, որ էլ չը վախենամ. մենք այսօր էլ խունկ ծխեցինք, ես ու տասիկս. հայրիկս այնտեղ է: Յետոյ այստեղ կուռնկները կոյր են, իրենց ձագերին են փնտրում. տասս գիտե, ո՞ւր են նրանց ձագերը, երբ տուն հասնենք, կը պատմի ինձ կոյր կուռնկների հեքիաքը. նա այնքան լաւ հեքիաքներ գիտե. ա՛յ, այնտեղ էլ չար վիշապն է, (*ցոյց է տալիս ամբողջը*) նրա հեքիաքն էլ գիտե: (*Ասլանը յափշտակութեամբ սկանջ է դնում փոքրիկին և ուղարկը նայում պառաւին*):

**ՓԷՐԻ.** Գնանք բալիկ, գնանք, (*Ասլանին ու Հիւրիին*) երբ գիւղ հասնեք, չը մոռանաք, հարցեք պառաւ Փերիի տունը. նզովքն է բուխս նստել նրա օջաղի վրայ, բայց էլի մի անկիւն կայ ձեզ պէս դարիքների համար. միայն շուտ, շուտ, մի ուշանաք շատ, այս ծառերը շատ են լացել: (*Հեռանում է փոքրիկ աղջկայ հետ, մինչդեռ Ասլանն ու Հիւրին երկար նայում են նրանց յետևից և ապա մնում մտախոհ*):

**ՀԻՒՐԻ.** (*Միշտ նայելով նրանց յետևից*) Ո՞վ էր այս պառաւը, որ այնպէս խօսում էր իմ արտից. նրա ձայնը իջնում, բախանցում էր մինչեւ հոգուս խորքերը, ինչպէս մեռաւոր կարապ, որ խառնում է արցունքի լիւր: Հայր, հայր, գնանք նրա յետևից, նա աներեւոյք, դիւրական քելով բաշում, տանում է ինձ, եւ սիրտս, ինչպէս բռնունք վանդակից, ուզում է դուրս պրծնել կրծքիս տակից եւ նրան հասնել. գնանք նրա յետևից, այս աշխարհի համար ու հսկայ վիշտն էր խօսում նրա արքունիներով:

**ԱՍԼԱՆ.** Գնա՛նք, զա՛ւակս, ես հանգստացայ. բրունիք ձերս, ա՛յ, այսպէս, (*ոտքի է կանգնում*) բայց սպասիք, ձայներ են գալիս. (*հեռուից յայտնում են զհողացիներ, կանայք, աղջիկներ, որոնք վերադառնում են դաշտային աշխատանքներից զանազան գործիքներ, իրեր, խոտ շալակած, զարմացած նայում են Ասլանին ու Հիւրիին, իսկ վախով՝ դղեակին ու շտապ շտապ անցնում են, բոլորի դէմքին լուռ սարսափ*):



### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

**Ա. ԳԻՒՂԱՅԻ.** (Խոտ շալակած կանգ է առնում և դիմում է լետ մնացած կնոջը) Շուս-շուս արի, ա՛յ կնիկ. սես ադամարդու ոտքը կտրուեց դաշտերից, սար ու ձոր մնջեց եղ վերանից. (ցոյց տալով դղեակը) հիմա ցած կը քափուեն արիւնարբու բորենիները, մարդակերպ գազանները, Ասուած իր աչերը փակել է մեզ վրայ եւ իշխանին՝ վիշապի պես չար, վիշապի պես անկուտէ՝ դրել է այնտեղ, (ցոյց տալով սարը) որ մենք սնանք, սնանք ու մարենք, շուս արի, ա՛յ կնիկ. (անցնում են շտապով):

**Բ. ԳԻՒՂԱՅԻ.** (Նոյնպէս խոտ շալակած անցնում է, բայց լանկարծ պարանր կտրում է, նա կանգ է առնում) Հարեւան ախպեր, է՛յ հարեւան, կաց, կաց, սնաշեն, սես, պարանա կտրուեց, կաց, ես անտերը մեջքիս տուր, (հաւաքում է խոտը) չար սասանան անիծուի, ո՞րտեղ քափուեց բեռս եէ՛...:

**Ա. ԳԻՒՂԱՅԻ.** (Յետ նայելով դժկամութեամբ) Տունդ ֆանդուի, տեղ գտար, արիւնի հոտ է գալիս չորս կողմից: (Մտանում է օգնելու, բայց Սալանը նրանից առաջ հասնում է, բարձրացնում է բերր զիւղացու շալակին): Ասուած ֆո գործին յաջողութիւն տայ. դարիք ես երեւում, ախպեր, այստեղ շուս մի մնայ. (զնում է շտապով, նրան հետևում են այլ զիւղացիներ բահով, կացնով, մանգաղով):

**Մի խումբ աղջիկներ.** (Բանջարաբաղից են գալիս, երար հրճելով ու սոսկումով դղեակին նայելով շտապում են դէպի զիւղը):

**Ա. ԱՂՋԻԿ.** Արեւը մտաւ, ձորերը մթնեցին, շուս արեք աղջիկերք:

**Բ. ԱՂՋԻԿ.** Գերեզմաններից Ջիննին դուրս կը գայ, շուս անցեք աղջիկերք:

**ԲՈՒՈՐԸ.** Փախե՛ք, փախե՛ք... դաշտում ձիաւորներ... (ծածկում են շտապով):

**ՀԻՒՐԻ.** (Սպաշած նայելով նրանց յետևից) Հա՛յրիկ,

հա՛յրիկ, բոլորը դողում են, բոլորը փախչում են, մի մուր, աւերիչ ոյժ է բուն դրել այնտեղ՝ այն սարի գլխին եւ քաղաւորում է այս կախարդական բնութեան վրայ. մի չար աստույ դաժան հալեացքն է այնտեղից կախուել եւ ամեն ինչ փառացնում է. հա՛յրիկ, ո՞վ է այնտեղ, այս ո՞ւր ենք մենք:

**ԱՍԱՆ.** Գնանք, զա՛ւակս, գնանք (առաջ են շարժւում):

**ՀԻՒՐԻ.** (Կանգ առնելով գերեզմանների առաջ) Տե՛ս, որքան շուս են այս շիրիւները, բոլորը քարմ, բոլորը մխում են: (լսում են հեծկլտանքի և լացի ծայներ) Չայնե՛րը, հին ձայները լսում եմ նորից. երկի՛րն է սնում անագին ցալից, որ պարկեղ չի կարողանում. է՛յ, է՛յ, ի՛նչ էք ֆենել, յիմարներ, ասացեք, ինչո՞ւ էք սնում, երե՛ մեռած էք:

**ԱՍԱՆ.** (Գրկելով նրա գլուխը) Հանգի՛ս, զաւակս, բող նրանց հանգիստ, այդ երեկոյեան հովն է հեծեծում սեւ անտառներում. սես, արեւն արդէն մայր մտաւ, շապենք դէպի գիւղ. բող նրանց հանգիստ, այն հովն է հեծեծում սեւ անտառներում...:

**ՀԻՒՐԻ.** (Յափշտակութեամբ) Ո՛չ, ո՛չ, հովը չի հեծեծում սեւ անտառներում. ծառերը մնջել են եւ լուռ երագում են գաղտնիք ցալի. հովը չի, հա՛յրիկ, լաց ու հեծկլտանքն է հնչում այնտեղից. (կանչում է) է՛յ, է՛յ, խօսեցե՛ք, մխացող բուրբեր, խօսեցեք դուք. էյ, որ հովի սակ չանգոնում էք ձեր կուրծքը, էյ, էյ, (գերեզմանների մէջ հողամթերի յետևից բարձրանում են բազմաթիւ սևազգեստ ուրուականներ կանացի պատկերով և ցրիւ են գալիս զանազան կողմեր):

**ՀԻՒՐԻ.** Տես, հայրիկ, Օօ՛, զարհուրանք, զարհուրանք, (ծածկելով երեսը) եկա՛ն, եկա՛ն: (սոսկումով) Ո՞վ է գալիս դէպի մեզ, ես լսում եմ նրա ոտնաձայնը, նա ֆայլում է հոգուս փոշու առապարներով. նա մեղմ սնում է կրծքիս սակ. նա իր պաղ, ոսկրոտ ձեռներով ֆամում է սիրս... հե՛յ, հե՛յ, ո՞վ ես դու, որ ֆայլում ես հոգուս



խաւար նամբաներով. ո՞վ ես դու, որի ոսնածայնը լսուով  
է կրծքիս սակ, խօսի՛ր, խօսի՛ր...

**ԱՍԼԱՆ.** (Միշտ զրկած պահելով Հիւրիին) Հանգի՛ս,  
զա՛ւակս, հանգի՛ս, գնանք մեր հանապարհը, այն  
խունկ ծխողներն են, այրիներ ու մայրեր...

**Հիւրի.** Այրիներ ու մայրեր են, իսկ այս մեկը,  
այս մեկը... զարհուրելի է... զարհուրելի է... նայիր, էյ,  
էյ, ո՞վ ես դու... (զերեզմաններից դուրս է գալիս Ջիմնին  
ցատկրտելով ու ծափ տալով, մազերը շող անցած, շորերը պա-  
տառոտուն, աչքերը կատաղի):

### ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ.

**Ջիմնին.** «Կարինն ու օձը են սարի գլխին՝  
«Մարդ ու կին դարձած՝ առագաստ մսան,  
«Դաժան բուերը նրանց հարսնիքին՝  
«Երգ են հեկեկում սեւ ծառի վրան,  
    Վա՛յ լե, լե, ջան ջան...»  
«Օձը նռնում է երկունքի ցաւից,  
«Լուռ կացե՛ք, բուեր, իշխանն է ծնում.  
«Չղջիկն է սասմեր, իժերի ցեղից՝  
«Խաւար գիշերին՝ իշխանն է ծնում,  
    Վա՛յ լե, լե, ջան ջան...»:

**ԱՍԼԱՆ.** (Բաշտելով Հիւրիին թևից, որ քարացած լսում է)  
Գնանք, զաւակս, գնանք, դա մի խենթ պառաւ է:

**Ջիմնին.** Գնա, աղջիկս, դու շուս, շուս գնա, օձ  
ու կարիներից իշխանն է ծնուել:

**Հիւրի.** Է՛յ պառաւ, դու այստեղ ի՞նչ ես անում:

**Ջիմնին.** Ձիներն անում է իշխանի գովեր, է՛յ,  
սիրուն աղջիկ, իսկ դու շուս գնա, սեւ մութ գիշերին՝  
օձ ու կարիներից իշխանն է ծնուել:

**ԱՍԼԱՆ.** Գնանք, զաւակս, գնանք:

**Հիւրի.** Ի՞նչ իշխան, պառաւ:

**Ջիմնին.** (Չը լսելով)

«Նրանք երեք էին մեկ մեկից սիրուն,  
«Երկուսը տղամարդ՝ հա՛ էն սարի պէս,  
«Եւ մեկը աղջիկ՝ հա էն ծառի պէս,  
«Երեք բառլանին Ձիներն էր ծնել,  
«Նա երեք անգամ երկունք էր փաշել  
«Եւ երեք անգամ ծնունդ էր նստել.  
«Տղաներն էստեղ են, էս հողի սակին,  
«Աղջիկս էնտեղ է, էն սարի գլխին,  
«Ուր կարին — օձից իշխանն է ծնուել,  
«Մի կարմիր իշխան, հա, հա, հա (նա քրքջա-  
լով փախչում է դէպի զերեզմանատունը, որտեղից վերստին  
լսում է լաց ու հեծկլտանք):

**Հիւրի.** Հա՛յրիկ, հա՛յրիկ, (փաթաթում է հօրը հե-  
կեկալսով):

**ԱՍԼԱՆ.** ((Բռունցքը զարթոթով դէպի դղեակը մեկնած)  
Դո՛ւ ես, դո՛ւ ես, նզովեալ շենք, որ իմ երազները բու-  
նաւորեցիր մանկութեան օրերից: Տես, այժմ եկել եմ հե-  
ռու հորիզոններից՝ յոգնած ու անջուրած աշխարհի ցաւի  
սեւ համբաներում, էւ ինչպէս մոլեգնած ու աւերիչ  
հողմ, ինչպէս կասաղի մերկի մի կտոր՝ էս կը գալարուեմ  
այս սասանուած հովքի վրայ դժոխքի երգերով, բոլոր  
կորած խրճիթների դուները կը բաղխեմ, բոլոր կտուրների  
սակ կը մոնչամ, ուր կծկուել է քո ծնած սառապանքը,  
ուր հեծեծում է ստուկ ժողովրդի անագին վիշտը: Ոչ-  
խարհերի հօտերին էս ժանիքներ կը քամ էւ բառաչող գառ-  
ներին էս գայլեր կը դարձնեմ, որոնք կը գան հիրանե-  
րով ու ժանիքներով բզկեղու քո բռնաւորի զարեղի մի-  
սերը: Անզգայ կրծքերը կը փանդեմ էւ բութ ցաւի տեղ  
բունաւոր փշեր կը սնկեմ, որ բոլորը ծառանան հսկա-  
յական ցաւից էւ որպէս արդար ցասումի կասաղի ու  
փրփրադեզ հեղեղ, զան զարկուելու ու խորհակելու քո  
անիրաւ ու կուռ կազմուածքը: Քո ձեռքից էի վսարանդի  
ընկել սար ու ձոր, այժմ քեզ համար եմ երկրէ երկիր  
անցել, քեզ համար եմ տրորել ոսկերս այս իմ փխրուն



զաւակիս հետ: Հիւրի, Հիւրի, իմ քննոյ՛ց զաւակ, սա  
 դժոխքն է, սա նզովքն է, սա կարմիր բռնութիւնն է,  
 որի սակ սնում են հազար—հազարներ: Հիւրի, իմ դրժ-  
 բայս զաւակ, մենք այնտեղ ենք, որտեղից մութ գիշեր-  
 ներին, հողմերի քեւերով լսում էին տառապանքի նի-  
 չերը, սա իմ ծննդավայրն է, Արցունքի Հովիտը, ուր բո-  
 յորը լալիս են, բոյորը սգում, բոյորը սրտերը մխում...  
 փոքրիկ... փոքրիկ, գայրոյթի, վրեժխնդրութեան փո-  
 քրիկ...

Հիւրի. (Փառամոռնւելով հորը) Հա՛յր, հա՛յր, ես պաշ-  
 տում եմ եեզ...



**ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ.**

Գիւղական խրեիք, ցածր ու մեղս. մի անկիւնում  
 բարձրանում է աղբասիկ անկողիներէ ծալքը փոքրիկ  
 ֆառոսանու վրայ: Պատերից կախուած են գիւղական  
 գործիքներ—մաղ, կացին, մանգաղ, գերանդի եւ այլն:  
 Պատերի սակ շարուած են խեցեղէն ամաններ, ջրի սա-  
 փոր, կնուներ: Ծալքի սակն է հացի տաշքը մի ֆանի  
 հացերով: Կենտրոնում բռնիրն է. նրա եզրին փռուած է  
 մի խափ: Նազէն նստած է խափի վրայ, տարուբերում է  
 երեխայի օրօրոցը եւ օրօր ասում: Երեկոյ է. սեւ նրագ-  
 կալի վրայ մեղմիւ վառուում է ձիթէ նրագը, աղօս ու  
 մեռւածապատ լոյս սփռելով իր շուրջը:



3558-2002  
 B 971





## ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆԱԶԷ. (Մենակ, օրորելով երեխային)

- „Քնի՛ր, ի՛մ բալիկ, օրօր, ի՞նչ արա,  
 „Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել,  
 „Կոյր կուռնկները սուգ ու շիւանով  
 „Մեր սեւ երկնքով եկան անց կացան,  
 „Այս, մեր լեռներում նրանք կուրացան,  
 „Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:  
 „Հողմն է հեծեծում սեւ անտառներում,  
 „Անտառ մեռելի սուգն է այն, բալիկ,  
 „Անտառ ու անբաղ մեռելները շա՛տ, դու  
 լաց մի լինիր...  
 „Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,  
 „Սեւ անապատում ծունկ չոքեց, մնաց,  
 „Այն մեր աշխարհի դարդ ու գուլումն է,  
 դու լաց մի լինիր...  
 „Յուլունք եմ շարել, կապել օրօցիդ,  
 „Չար աչքերի դեմ, մեր չար դուռերի,  
 „Քնի՛ր ու անի՛ր, շուտ արա, բալիկ, դու լաց  
 մի լինիր...  
 „Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց,  
 „Գիտեմ, այն դառն է, չես ուզում, բալիկ,  
 „Այս, վե՛սիս քոյունն է փամուռն նրա մեջ, դու  
 լաց մի՛ լինիր...  
 „Կաթիս հետ մեկտեղ սեւ վիճես ծծի՛ր,  
 „Հոգուդ մեջ բոլ նա սեւ վրեժ դառնալ,  
 „Ծլիր, բոլ փաշի՛ր, բոլիդ ես դուրբան,  
 „Եւ լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել“:

ՆԱԶԷ. (Դադարելով երգելուց, աչքերից մեղմիւ քամուտ  
 են արցունքները. նայում է չորս կողմը) Մութ է, չեկան,  
 ի՞նչ պատահեց, Տե՛ր Աստուած. (աչքերը սրբում է զոգնոցով),

ի՞նչու ուռացան... (լռութիւն. կռնում է օրօրոցի վրայ)  
 իսկ դու քնի՛ր, դարդոս բալայ, չուից, ցաւից, սեւից  
 հեռու, քնի՛ր, մեծացի՛ր եւ երբ մեծանաս, աշի՛ր աշխարհը.  
 ինչպէս մի վաս բոյս արտիցդ պոկի՛ր գութ ու բարութիւն.  
 ասամներդ սակ դանակը սրի՛ր, հոգուդ դուները երկա-  
 քով փակի՛ր եւ բոլ բժնամուդ հառաչանքը չը բափանցի  
 այնտեղ ու չը բուլացնի բարձրացած հօր բազուկիդ  
 անողորմ քափը... (լռութիւն. դարձեալ նայում է շուրջը ան-  
 հանգստութեամբ): Ինչո՞ւ ուռացան, (ականջ է դնում), ոսնա-  
 ձայն է գալիս. (դուռը բացում է եւ ներս են մտնում Փէ-  
 րին ու Շողիկը):

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՇՈՂԻԿ. (Վազէվազ դիմում է դէպի մայրը և փամած-  
 ւում նրա պարանոցով) Մա՛յրիկ, մա՛յրիկ, Զիննիին տե-  
 սանք, ծափ եր տալիս ու երգում. այնպիսի բաներ եր  
 երգում, ես վախեցում եմ, յետոյ փախաւ գնաց, ծիծա-  
 դում եր. կուռնկներ կային, կոյր կուռնկներ, շարան  
 շարան գնացին, գնացին. տասիկը կը պատմի, քե՛ն ո՛ւր  
 կորան նրանց ձագերը. մա՛յրիկ, խեղճ էին, կողում  
 էին... Յետոյ այնտեղ մի մարդ տեսանք իր աղջկայ հետ. նրա-  
 սած էին ուռիների սակ. (նայելով մօր աչքերին, շրթունքներն  
 ուռցրած լացակամած) մայրիկը լալի՛ս է... տա՛նիկ, լալիս  
 է մայրիկը... (ուզում է լալ և դիմում է դէպի տատը, երեսը  
 թաղում նրա կրծքի տակ):

ՓԷՐԻ. (Մտնոյ լանդիմանութեամբ) Նա՛զէ, որդի, բա-  
 ւախան չեղա՞ւ... ի՞նչ անեմք, լացով ինչի՞ կը հասնենք...  
 տունդ փանդուխ, Ֆալա՛գ, ես ի՞նչ սեւ եր բերիր մեր գլխին,  
 ամենքի գլխին. փանի՛ մայրեր են վե՛զում, փանի՛ ջա-  
 հիլներ են սեւ կապել... ի՞նչ անենք, ո՞ր ջուրն ընկնենք,  
 որ ազատենք, լացով ի՞նչ կարող ենք անել, այսփան  
 արցունք Աստուածն էլ դուր չի գալ...:

ՆԱԶԷ. (Ընդհատելով նրան և ոտքի կանգնելով) Ելի  
 Աստուած... մեզ համար չրկայ, չրկայ այդ Աստուածը,



դասակ է մեր գլխի վրայ կախուած կապոյտը. Աստուած որ լինէր, ինչո՞ւ պէտք է մեր ողջ աշխարհը բոցերի մէջ փոքոքուէր. ինչո՞ւ պէտք է մնայինք ձեռներս՝ ծոցներէս, վիզներս՝ ծուռ, ջիգեարներս՝ մումուռ, սիրներս՝ խոց, հոգիներս՝ փոքոքուած, աչքներս՝ արցունքի ծով: Այստեղ Աստուած չը կա՛յ... Աստուած այնտեղ է, են սարի գլխին, են բերդի, են դղեակի մէջ. Աստուած մարդասպանների, աւազակների արի ծերին է, գէլ ու գագանների ժանիփների մէջ, հարամիների ձեռքին... օօ՛ֆ:

**Փէրի.** (*Մտղմ լանդիմանումնամը*) Ո՛րդի, ո՛րդի, (*երկինք նայելով*) Տե՛ր, մեղայ քեզ:

**ՆԱԶԷ.** (*Աւելի և աւելի ցասկոտ ողորումեամը*) Մարդու սպանեցին, տեղիս բանների մէջ քաղեցին, մնացինք անտե՛ր, անսիրական եւ ծակի մէջ. գիշերն է գալիս, դողում եմք սարսափից, ցեւեկը՝ քաղցած լալիս եմք պաղ բռնան շքիւն. պատիւ չունենք, քեզինք չունենք, արիւն չունենք, բոլորը նրանցն է, են սարի գագաններինը. խաբուն մարե, խաբուն մարե, չը կայ Աստուած մեզ համար:

**Փէրի** (*Մտղմ լանդիմանումնամը*) Որդի՛, Նազե՛, բաւական է, Տե՛ր, մի՛ լսիր այդ խօսերը. մեղաւոր եմք Տե՛ր...

**ՆԱԶԷ.** (*Ընդհատելով*) Տեսնո՞ւմ ես եւ ձկները, (*ցոյց տալով օրորոցը*), կարիս հետ բոյն եմ քանում երակների մէջ. աւազակ, հարամի, մարդասպան, անողորմ մարդասպան պիտի դարձնեմ քան. կ'ասեմ բա՛լիկ, Աստուած չը կա՛յ, գուր ու խիղճ չը կա՛յ, աշխարհը գայլերի, բորենիների բոյն է, դու էլ բոյ քաշիր, բոյիդ մեռնեմ. է՛յ բալիկ, է՛յ, ոտքի է՛յ, գա՛րկ ու փերի՛ր աջ ու ձախ. հագիդ մեռ քաւ դարձնո՛ւ եւ սիրտդ պողպատ. գա՛րկ, գա՛րկ ու քանդիր նզովում աշխարհը. բոլորը սուտ է, բոլո՛ւրը, եւ՛ հաւատ, եւ՛ Աստուած, եւ՛ արդարութիւն, եւ՛ խիղճ, բոլո՛ւրը, բոլո՛ւրը... օօ՛ֆ (*կործրը բռնում է եւ հեկեկում*):

**ՇՈՂԻԿ.** (*Վաղում է դէպի մայրը ծջալով և փաթածում է նրան*) Մա՛լիկ, մա՛լիկ...

**Փէրի.** (*Շողիկին դէպի ինքն է քաշում*) Այստեղ արի, մասաղ, (*պարկեցնում է և գլուխը ծնկանը դնում*). քնի՛ր, բա՛լիկ, քնի՛ր, ա՛յ այսպէս... Նազե, որդի, լաւ չի ասածդ, լաւ չի, ասում եմ, էլի փառք Իրան, հալբաթ մեղք ունենք, որ...

**ՆԱԶԷ.** (*Ջղածգարար ծածղելով արցունքի միջից*) Հա, հա, հա... մեղք ունենք... մեղաւոր եմք... հա, ի՞նչպէս չէ, մեղաւոր է եւ ձկները... մեղաւոր է այդ Շողիկը, որ վախից քանում, մաւում է, մեղաւոր է Ջիննին, որ չոլերն է ընկել, մեղաւոր եմ արեակօլով մեռելները. արդար եմ սարի կասարի գագաններն եմ միայն:

**Փէրի.** Տե՛ր, խնայի՛ր մեզ, մի դուռ բաց արա՛, մի լոյս ցոյց տո՛ւր, մի հար, մի հանապարհ սեւերի միջից, Տե՛ր...

**ՆԱԶԷ.** Ինչպէս չէ (*վերստին նստում է օրորոցի կողքին և աչքերը յարում է մի գէտի, երկու ձեռքով ծնկները զրկած*):

**Փէրի.** (*Ինքն իրան*) Գու ո՞ւր գնացիր, քառլան բա՛լայ, ո՞ր չոլերը, ո՞ր ձուրերն ընկար, եարաբ ո՞ղջ ես, եարաբ լսո՞ւմ ես մեր ցաւի ձայնը, մեր քանջանքը, եարաբ գիշերները չե՞ս տեսնում մօրդ, եւ աւեր տունը, եսքան դարդերի սակ կուացած, արցունքից կուացած պառաւիճ: Ախ, մեկ երեւայիւր, մեկ ձայնդ լսի եւ խլացած ականջներովս, մեկ դիմդ տեսնի եւ կուացած աչքերովս, լեռնոյ քո օրհնած ձեռքով ինձ քաղիւր, մի պատու հող ցանկիր վրաս. օօ՛ֆ, ո՞ւր գնացիր, ազիգ բալա՛յ, բոչուն էիր, քեւ առար, բուա՞ր, քե՞տ ասող, ցոլացիր, անցար...

**ՇՈՂԻԿ.** Տա՛սիկ, ո՞վ:

**Փէրի.** Կուռնկի ձագը, բա՛լիկ, կուռնկի ձագը:

**ՇՈՂԻԿ.** Ի՞նչ եղաւ կուռնկի ձագը, չե՞ դու ասացիր, կը պատմեմ:



**ՓԷՐԻ.** Գնաց, բա՛լիկ. բռաւ, գնա՛ց... մայր կռուցիր բուխս նստեց ու երեք ձագ հանեց. չար դուռ-մանր զարկեց, երկսին սպանեց, մնաց եւ մէկը. նա էլ մի օր բռաւ գնաց. մայրը մնաց մենակ, լացեց, լացեց, աչքերը կուրացան. յետոյ, կոյր աչքերով բռաւ, ընկաւ սարեասր, ձորեձոր. ամեն տեղ փնտրում է իր ձագերին եւ լալիս է, լալիս է...

**ՇՈՂԻԿ.** Տասի, ախր կոյր է, ի՞նչպէս է փնտրում:

**ՓԷՐԻ.** Նա վերից կողում է, բա՛լիկ, խեղճ-խեղճ կողում է, որ իր ձագը ձայնը լսի, ու գայ...

**ՇՈՂԻԿ.** Էն կռուցիր չէր կողում, վախենում եր... յետոյ կը կողայ, ձագին եր փնտրում... տասիկ... կռուցիր... ձագը... կողայ... կող... (ընում է):

**ՓԷՐԻ.** (Երեխայի գլուխը տեղատրում է գզուշումեամբ և լուռ նայում երեսին) Ինչպէս մաշուել է խեղճ երեխաս... Գիտե՞ս, Նա՛գե, մի դարիք համբողջ տեսայ իր աղջկայ հետ, յոգնած, նսած էին եւ ուռիների սակ. աղջկին ենպէս նման էր Շողիկիս, ենպէս նման. նայեցի ու սիրս նխաւաց, կասես իմ գաւակը լինէր. սրա պէս գունատ, սրա պէս մեծ աչքերով. մայրիկ ասաց ինձ, ու սիրս նխաւաց... տարօրինակ էին երկսով էլ... ասացի մեր տուն գան, գիշերեն. տեսնես ի՞նչ եղան, ո՞ւր գրնացին... ես անխաւ աշխարհում, ես մութ գիշերին...

(Լռումին. յետոյ ոտնածայներ դրսից)

**ՓԷՐԻ.** Ոճնաձայն է լուռում, արդեօք նրա՞նք են. (դուռը ծածում են) դուռն են ձեծում, Նագե, որդի, բա՛ց դուռը.

**ՆԱԶԷ.** (Վեր է կենում և դուռը բաց անում. շէմքի վրայ յայտնում են Ասլանն ու Հիւրին):

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

**ԱՍԼԱՆ.** Բարի երեկոյ, եո՛րիկ, Փերիի տունն է այս:

**ՆԱԶԷ.** Աստու բարին. հա, ախպեր, Փերիի տունն է:

**ՓԷՐԻ.** (Ուշախացած) Հա, հա, ախպեր, եդ դո՞ւ ես, ներս արի, մեր սեւ յարկի սակ. բող քո տնով Աստուած խեք բերի:

**ԱՍԼԱՆ.** Հագիւ գտանք, փողոցներում մարդ չը կայ, որ հարցնենք. ասացիր, Փերիի տունն եկեք, եկել ենք, մի գիշերուայ ապաստան, մինչեւ լուսանայ:

**ՓԷՐԻ.** Ղօնաղն Աստուանն է, ախպեր, ներս եկեք: Նագե, որդի, անա ասածս դարիք մարդն ու իր աղջիկը. տը գցի՛ր, բող նստեն:

**ՆԱԶԷ.** (Շտապում է դէպի անկողինների ծալքը և դուռը է բաշում մի փալաս, ձգում խորի վրայ):

**ԱՍԼԱՆ ԵՒ ՀԻՒՐԻ.** (Անշարժ կանգնած, ուշադրութեամբ նայում են իրանց շուրջը և երկու կանանց)

**ՓԷՐԻ.** Հարսս է, այրի է, տղիս սպանեցին, ջանի ջիւան. օ՞Ֆ, օ՞Ֆ, ախպեր, ո՞ւր մեկն ասեմ, կրակների մեջ փոթորում ենք... առաջ անցեք, հանգստացեք, (երբ Ասլանն ու Հիւրին նստում են) Նա՛գե, որդի, հաց դի՛ր բո՛ւղ ուտեն, քաղցած կը լինեն:

**ՆԱԶԷ.** (Սփռոցի վրայ դնում է մի քանի կտոր հաց) Մեր Աստուածը մեզ էս բողել, ախպեր:

**ԱՍԼԱՆ.** Շէն մնաք, փոյրիկ, շէն մնաք, շնորհակալ ենք: (Ուտում են):

**ՓԷՐԻ.** (Մի անժամանակ լուռութեամբ նայում է Ասլանին ու Հիւրիին) Շատ ման եկած մարդ էս երեւում, քաղաքներ, գիւղեր, սար ու ձոր:

**ԱՍԼԱՆ.** Հա, մայրիկ, տաս եմ ման եկել, քաղաքից քաղաք, գիւղից գիւղ:

**ՓԷՐԻ.** Այդ էլ քո աղջիկդ է:

**ԱՍԼԱՆ.** Հա, մայրիկ, այս էլ իմ աղջիկս է:

**ՓԷՐԻ.** Խեղճ աղջիկ, ինչպէ՛ս մաշուել է, տաս է յոգնել:



**ՀԻՒՐԻ.** (*Աշխոյժով*) **Ձ**՛, մայրիկ, ես շատ չեմ յոգնել, հայրիկս ե յոգնել:

**ՓԷՐԻ.** (*Մտածկոտ մի առժամանակ*) Երբ եկել էք, հայրաք մի դարդ ունեք. աշխարհում ամեն մարդ իր դարդն ունի: Բայց էլի, ախպեր, շուտ հեռացիր այս կողմերից:

**ԱՍԱՆ.** Ինչո՞ւ մայրիկ, ի՞նչ կայ այս կողմերում:

**ՓԷՐԻ.** Էհ, ի՞նչ ասեմ, ինեղ աչքովդ տեսնում ես:

**ՆԱԶԷ.** Այստեղ Աստուած չը կայ:

**ՓԷՐԻ.** Նազե, որդի... Հա, եհ էի ասում (*Ասլանին*) կրակի ծովը բռնել է չորս կողմներս, զուլում է, զուլում: Զիննիին տեսա՞ք...

**ՀԻՒՐԻ.** Տեսանք, մայրիկ, խե՞ղք է. ինչո՞ւ է խենք:

**ՆԱԶԷ.** Մեր Աստու ողորմութիւնից:

**ՓԷՐԻ.** Նազե... Էհ, գաւախս, դարդից ե խենքացել, դարդից. դարդը ծո՞ւլ է...

**ՆԱԶԷ.** Մեր աշխարհում բոլոր մայրերն են խենք արտի մուռուկից. այրիները լալիս են ու մարում, ինչպէս խորեականար ծաղիկներ. մեր վաստակի, մեր ֆրսիների, մեր չարչարանքի, մեր գաւակների, մեր պատուի տեր մենք չենք, արիւն արցունք ենք լալիս. Աստուած խռովել է մեր գլխին, չարը չորս կողմներս բռնել է. ցաւից խենքացել ենք Զիննիի պէս:

**ՓԷՐԻ.** Հա, հա, Զիննի պէս. մի Զիննի էլ ես եմ, հողն ինձ տանի, երեսս պինդ է, դեռ դիմանում եմ, ո՞վ գիտէ, էլ ինչե՞ր պիտի տեսնեմ: Սարի պէս տղամարդ ջիւանս կտր կտր արին ձորերում, մեկէլին էլ տարան, կորցրին, հարս էլ սեւ հագաւ: Մնաց մեկը, եհ էլ վաղուց գնացել է. գնաց ու չ'եկաւ: Է՛հ, որ եկել էք, երեւի մի դարդ ունեք, բայց էլի շուտ հեռացե՛ք ես կողմերից, Աստուած ազատի դարիբներին, բոլոր դարիբներին... Հեռո՞ւ պիտի գնաւ.

**ԱՍԱՆ.** Զըգիտեմ:

**ՓԷՐԻ.** Հեռուի՞ց եք գալիս:

**ԱՍԱՆ.** Այն էլ չը գիտեմ:

**ՀԻՒՐԻ.** Հեռու ու մօտիկ չունենք, մա՛յրիկ, այնպէս ֆայլում ենք, ֆայլում ենք... աշխարհը լայն է, մինչեւ կը հասնենք արշալոյսին. (*լուռօրին*):

**ՓԷՐԻ.** Հեռու ու մօտիկ չունեք... բող լինի, ո՛րդիք, էլի ի՞նչ եք փնտրում այս կողմերում:

**ԱՍԱՆ.** (*Հաց ուտելուց դադարած, լուռ խաղում է ձեռնափայտով կամ նայում Փէրիին ուշադրութեամբ*) Արեւ ենք փնտրում, մայրիկ:

**ՓԷՐԻ.** Արե՞ւ:

**ԱՍԱՆ.** Հա, մա՛յրիկ, տա՛մ արեւ:

**ՓԷՐԻ.** (*Զարմացած նայելով Նազէին*) Այնտեղ, ձեր կողմերում արեւ չըկա՞ր:

**ԱՍԱՆ.** Ձե, մայրիկ, արեւն այնտեղ ստուն էր. տես, աղջիկս ինչպէս գունաս է. նա չէր տեսնում. դուրս բնկանք աշխարհ, տա՛մ, կենդանարար արեւ փնտրելու, որ նա տեսնայ:

**ՀԻՒՐԻ.** Ես սիրում եմ տա՛մ, բոցակեզ արեւը, որի առաջ ամպերն են հալում:

**ՓԷՐԻ.** (*Մտածկոտ, զարմացած*) Ձեմ հասկանո՞ւմ, չեմ հասկանո՞ւմ...

**ՀԻՒՐԻ.** Ձեր արեւն այնպէս կարմիր էր, այնպէս կարմիր, ինչպէս արիւնը:

**ՆԱԶԷ.** Այն մեր Աստու աչքն է, որ արիւն է բարբում մեր գլխին:

**ՓԷՐԻ.** Նա՛զե, որդի, այդ ի՞նչ ես ասում, այդ ի՞նչ ես ասում:

**ԱՍԱՆ.** (*Միշտ խաղալով ձեռնափայտի հետ*) Եւ երբ որ գտնենք այն արեւը... մա՛յրիկ, այս տունը հի՞՞ն է (*նայում է պատերին, առաստաղին*):



**ՓԷՐԻ.** Հա, որդի, հին տուն է, շատ հին:

**ԱՍԼԱՆ.** Երեւում է, հին տուն է:

(Լռութիւն):

**ՓԷՐԻ.** Լսի՛ր, ախպեր. ասացիր, որ շատ ես ման եկել, շատ աշխարհներ ես տեսել. մի չորում, մի ձորում, մի ֆաղափում կամ գիւղում, հեռու ճանապարհներում իսկի չը տեսա՞ր մի մարդ... մի այսպիսի մարդ... ա՛խ, գոնէ ողջ ու առողջ լինեք...

**ԱՍԼԱՆ.** Ինչպիսի՞ մարդ, մայրիկ, ես մարդիկ շատ տեսել:

**ՓԷՐԻ.** Ի՞նչ ասեմ... մի արտոս տղամարդ... որ լալիս էր, երբ ուրիշներն էին լալիս, խնդում էր, երբ ուրիշներն էին խնդում, որ խնդում էր մարդուն, ծառին, ծաղկին, քիթեռին, ամենիին. բոլոր անձանցերի, բոլոր սառապաղների համար արտում տեղ ուներ, արտի՛ն մեռնեմ... լայն սիւս էր եէ՛... ծովի պես լա՛յն, ծովի պես խա՛ր... ու բոլեց գնաց անձանցերի համար, բոլո՛ր անձանցերի... Այն իմ որդին էր...

**ԱՍԼԱՆ.** (Մտածկոտ) Անձանցերի համար գնաց...

**ՆԱԶԷ.** (Գամայրուկ խօսում է Հիւրիի հետ) Մայր չո՛ւննե՛ս:

**ՀԻԻՐԻ.** Ո՛չ. (խօսակցութիւնը շարունակում են առանձին):

**ՓԷՐԻ.** Հա՛, անձանցերի համար, այնպես էր ծրուած. մանկութիւնից հոգին լալիս էր, միշտ գունաս, միշտ քախձոս... ու բոլեց գնաց. լացեցի, մղկացի. գնա՛ց... Զրտեսա՞ր մի այդպիսի մարդ. եհ, ի՞նչ եմ ասում, ֆանի տարի է...

**ՀԻԻՐԻ.** (Մտենալով օրորոցին) Ի՞նչ սիրուն տղայ է:

**ՆԱԶԷ.** Ճակասագիրն է սեւ... արեւ չունի... մեկն ամենիս կտոս եմ տալ արեւի, ձեզ պես, ձեզ պես...

**ՀԻԻՐԻ.** (Զարմացած նայում է Նազէին) Արշալոյսներ դեռ շատ կան, փոքրիկ...

**ԱՍԼԱՆ.** Քանի՞ տարի:

**ՓԷՐԻ.** Քսան-երեսուն տարի.

**ՀԻԻՐԻ.** (Ուշադրութեամբ լսում է Ասլանին ու Փէրիին):

**ՓԷՐԻ.** Հա, քսան-երեսուն տարի. յիշում եմ ինչպես այսօր, կանգնած էի ա՛յ, այստեղ. գնում եմ, ասաց, մա՛յրիկ. ո՞ւր, որդի, ասացի. ե՛հ, գնում եմ, ասաց, էլ չի ապրում, էլ չի ապրում այսպես, կանչում են... ո՞վ, ասացի. կանչում են հազար հազարները, պատասխանեց ու գնա՛ց. մնացի յետեւից մղկալով. դուրս բռայ բակը, կանչեցի, գնաց ու գնաց...

**ԱՍԼԱՆ.** (Դողում է յուզմունքից ու լուռ է):

**ՀԻԻՐԻ.** Ան՞ուր:

**ՓԷՐԻ.** Ասլան, որդի, Ասլան. անունի՛ն մեռնեմ:

**ՀԻԻՐԻ.** (Կարեւոր դէպի հայրը ծայրայեղ յուզմունքով) Հա՛յրիկ, հա՛յրիկ, այս ի՞նչ եմ լսում:

**ՓԷՐԻ.** (Շփոթուած, յուզմունքով) Տեսե՞լ եմ, ասացե՛ք, տեսե՞լ եմ իմ բառլանին, ո՞րտեղ. երկաթի կօշիկ կը հագնեմ, երկաթի գաւազան կառնեմ ու կերթամ յետեւից:

**ՀԻԻՐԻ.** Հայրիկ, հայրիկ...

**ԱՍԼԱՆ.** Եղբայրնե՛րս, եղբայրնե՛րս, ես ոչ մեկը... (լալիս է):

**ՀԻԻՐԻ.** (Նետուելով դէպի Փէրիին) Մայրիկ, իմ տատ, իմ խեղճ տատ, որդի՛դ... Ասլա՛նը (ցոյց տալով հորը) այնպես չէ՞, հայրիկ... շուտ, շուտ, ես խեղդում եմ, սա մեռ մայրն է...

**ԱՍԼԱՆ.** (Դիմելով դէպի Փէրիին) Իմ խեղճ մայր, չե՞ս նախաչում որդուդ...

**ՓԷՐԻ.** (Տեղումը բարացած և մի առժամանակ լուռ, ապա լանկարծ ծջալով) Ասլա՛ն... Ասլա՛ն... իմ արեւը... դո՛ւ, Ասլա՛նը... իմ սարերի բառլա՛նը. երկնի՞ց բնկար, քե՞ր թռչունների քեւերով եկար... ո՛չ, ո՛չ, այդ անկարելի է... երեսուն տարի՛... (նայում է աջքերին, ձեռներին, ոտներին):



րի՛ն) Հա՛, հա՛, հա է, հա է, իմ բառլան բալաս... նոյն աչկերը, նոյն դեմքը. ես կոյր եմ, կո՛յր եմ... Եկա՞ր, ի՞նչու եկար, ո՞ւր եկար ես վերանր... դե որ եկար, բաղի՛ր ինձ շուտով, բաղի՛ր, որ էլ բաներ չը տեսնեմ... օ՞օ, ես վախենում եմ, ես դողում եմ, ինչո՞ւ եկար... ո՞ւր եկար ես վերան երկիրը. գուլում է, որդի, գուլո՛ւմ. արե՛ւ ես փնտրում... չը կայ, չը կայ, խաւարել է. գնա ուրիշ աշխարհներ, բող ես էլի մղկամ. վախենում եմ, մեզ արեւ պէտք չէ, հոնը բող մնայ, բաւական է... Եաման Ասուած, իմ գաւակն է, ես մեկը, ես մեկը ինայի՛ր, էլ չը կա՛յ, էլ չը կա՛յ... Նազէ, ա՛յ Նազէ, իմ բալաներն են ախր, տես իմ նաշխուն բալաները, *(փոխ առ փոխ համբուրելով Ասլանին ու Հիրիին)*:

ԱՍԼԱՆ. Մա՛յրիկ, Մա՛յրիկ...

ՓԷՐԻ. Ձեր հոգուն մասաղ, եկած համբին, ոտքի սակի հողին. Նազէ, Նազէ, փակի՛ր դուները, երդիկը, բող ոչ ոք չը տեսնի, ոչ ոք չը լսի, ոչ ոք չիմանայ, ախր սա Ասլանն է, օջաղիս վառ հրազը, կեանքիս յետին բելը, ցախս հարը, դարդիս դարմանը, մեր արեւը. փակի՛ր, փակեցէ՛ք, պինդ պինդ փակեցէ՛ք դուռն ու երդիկը... բող ասդերն էլ չը տեսնեն, բող բողորը կուրանան... բողորը... Ձեմ սայ, չեմ սայ, էլ ոչ ոքի չեմ սայ իմ նաշխուն բալաներին...

ԱՍԼԱՆ. *(Համբուրելով)* Մայրիկ, մայրիկ:

ՓԷՐԻ. *(Նախանայով)* Ձեա երբայ, էլ չես երբայ...

ԱՍԼԱՆ. Ո՛չ, ո՛չ, մայրիկ, ես էլ ինչ երբեք չեմ բողնի:

ՓԷՐԻ. Անողորմ բալայ, երեսո՛ւն տարի... մեռանք, փորսրուեցինք, դե տո՛ւտ, բաղի՛ր ինձ, օօ՛ֆ... *(կամաց կամաց թուլանում է որդու բազուկների մէջ)*:

ԱՍԼԱՆ. Մա՛յրիկ, մա՛յրիկ...

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Փերիի սան բակը. կենտրոնում բարձրանում է մի հինաւուրց ծառ, սաղարթաւտ ու գեղեցիկ: Մի փոքրիկ ցանկապատ ձախ կողմից բակը բաժանում է պարտեզից ու բանջարանոցից: Ծառից դեպի աջ երեսում է խոնիքը, ցածրիկ, մտոտ դռնով: Բակի խորում երեսում է մի ուրիշ դուռ, որ տանում է դեպի փողոց: Ծառի սակ փոքրիկ հողաբուսք՝ նստարանի տեղ: Երեկոյ է. Հիւրին ու Շողիկը վազեվազ են անում ծառի տուրջն իրար բռնելու համար:





ՇՈՂԻԿ. (Հացակամած) Մայրիկը լալի՛ս է, փոյրիկ,  
մայրիկը լալիս է. (նետուում է դէպի խրճճի դուռը):

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՓԷՐԻ. (Դուրս գալով խրճճից և զրկելով ընդառաջ  
վազող Շողիկին) Հիւրի, գաւակս, ախր մեկ գնա՛ Նազիկ  
մօս, ասա, մեղք եմք, մեր սիրեմ ինչի՞ ե քանդում բուր  
դանակով, բաւակսն չեղա՞ւ այդքան արցունքը. ես էլ  
գնում եմ եմ անմուրազի գերեզմանի վրայ մի պսղուց  
խուցիկ ծխեմ գամ, ժամին հասնեմ. կիրակնամուս է,  
գնա՛նք, Շո՛ղիկ ջան:

ՀԻԻՐԻ. Գնամ, մայրիկ, գնամ (համբուրում է Շո-  
ղիկին և ներս մտնում խրճճի, որտեղից շարունակում է լսուել  
Նազիկ ծայնը, ապա կամաց կամաց ընդհատում):

ՓԷՐԻ. (Շողիկի ձեռքից բռնած, առաջանում է դէպի  
բակի դուռը, բայց նոյն վայրկենին դրսից ներս է մտնում ուս  
Մոն):

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՌԷՍ ՄՆՅ. (Հագալով ու լամբաբայլ) Բարի իրիկուն,  
Փերի խաբուն:

ՓԷՐԻ. (Զարմացած, լետ լետ քաշուելով) Ասածու բա-  
րին, ուես Մնօ. խեք լինի:

ՌԷՍ ՄՆՅ. (Հագալով ու չիբուխը ծխելով. մօտենում  
է ծառին և նստում) Խեք է, խաբուն փութիկ, խեք չեղած  
ի՞նչ պիտի լինի (հագում է) աչդ լոյս... լսեցի, որդիդ՝  
Ասլանը եկել է... հագար բարի է եկել...

ՓԷՐԻ. (Ոտքի վրայ) Բարով խեռով մնաս, ախպեր,  
խեք ու բարին որդիներդ վրայ լինի:

ՌԷՍ ՄՆՅ. (Ծխում է, առանց վերև նայելու) Լսեցի  
ու ասացի, գնամ, մի սեսնեմ... քանի՞ տարի է հա՛ւ.  
Եկաւ էլի, վերջը վարանը փառեց-բերեց... Տա՞նն է:

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՀԻԻՐԻ. (Պտույտներ գործելով ծառի շուրջը, երբ Շո-  
ղիկն աշխատում է բռնել նրան) Չես բռնի, ա՛յ, չես բռնի:

ՇՈՂԻԿ. (Բարձրաձայն բրբջալով) Կը բռնեմ, կը  
բռնեմ:

ՀԻԻՐԻ. (Խաբս տալով) Չես բռնի:

ՇՈՂԻԿ. Կը բռնեմ... ասում եմ, կը բռնեմ... չե,  
այդպես չի կարելի, բոււբի վրայից չի կարելի ցատկել.  
(բռնում է Հիւրիի փէշից) ա՛յ, բռնեցի (բրբջում է):

ՀԻԻՐԻ. Ի՞նչ լաւն ես, ինչպես լաւ ես վագում,  
Շողիկ ջան:

ՇՈՂԻԿ. Ես այնպես լաւ եմ վագում, փոյրիկ, հայ-  
րիկս էլ չեք կարողանում բռնել... մեմք խաղում էինք  
այստեղ... Դու ինձ երբեք բռնել չես կարող, ոչ ոք չի  
կարող ինձ բռնել... դե, բռնի՛ր ինձ, քե կարող ես,  
(վազում է դէպի պարտէզ և յանկարծ կանգ առնում) փոյրիկ,  
ես վախենում եմ... տես (ցոյց է տալիս պարտէզը):

ՀԻԻՐԻ. Ի՞նչ է, մա՛սալ:

ՇՈՂԻԿ. Արագի՛լը... ես վախենում եմ, մայրիկս  
էլ է վախենում, ա՛յ այն արագիլը... հայրիկս է բերել,  
բեր կոտրում է. վախենում եմ...

ՀԻԻՐԻ. (Շոյելով զլուխը) Բայց նա ոչինչ չի անի,  
եթո մասալ, նա մի խեղն բոչուն է. ի՞նչ լաւն է:

ՇՈՂԻԿ. Կանի, վախենում եմ... նա լաւը չի, փա-  
րով կը խփեմ. մայրիկս ասում է, նա վասն է, այն արա-  
գիլը... վախենում եմ, փոյրիկ... (ներսից յանկարծ լսում է  
Նազիկ ծայնը. նա իր լալկան օրօրն է ասում՝ «Քնի՛ր, իմ բա՛-  
լիկ, օրօր իշ արա...»)



Փէրի. Չե, ախպեր, ասնը չի, գնաց:

ՌէՍ ՄՆՅ. Ո՛ւր գնաց, քո՛ւրիկ:

Փէրի. Դե, ախպեր, ո՞վ գիտե, գիւղերը գնաց. քանի քանի է չի տեսել... ծանօթ, ազգական, դուռ-դրացի, ես ի՞նչ գիտեմ, տեսութեան է գնում:

ՌէՍ ՄՆՅ. (Խորհրդաւոր ձայնով ու հազաւորով) Հա՛, հալբաթ, եղ լաւ է անում... դե, իմարկէ պիտի տեսնի, բայց դե էլի լաւ չի, քուրիկ, բող շատ դուրս չեքայ, գեղերն ի՞նչ կայ... լաւ չի:

Փէրի. (Ընդհատելով, սարսափած) Ռեա Մնօ, ի՞նչ կայ... քո որդիների սիրուն... չը լինի՞ քե...

ՌէՍ ՄՆՅ. Չե, ոչինչ, ի՞նչ կարող է լինել... դե, գիտես էլի, մեր աշխարհը, մեր ժամանակները, շատ ապրած, շատ տեսած կնիկ ես... սար ու ձոր ականց ունեն. ուստի եմ, մեր կեանքն ու մահը եմ սարի ծեփից, եմ դրեակից է կախուած... հազար ու մի շունկեր եմ պատում, ես ի՞նչ գիտեմ, ի՞նչ կարող է պատահել... դու էլ խեղճ պառաւ կի՞ն ես, սիրտդ երկու անգամ դող փառուց... ի՞նչ ասեմ, ապրում եմ. լաւ, վատ ապրում եմ Աստու սուածից: Հա՛, ասածս եմ է, որ մեր ցարը մեր ասածը գցած փառում եմ, ապրում եմ... էղ գեղերը քո՛ղ իրար չանցնեն, լաւ չի, լաւ չի, համ իր համար լաւ չի. համ մեզ համար... Եկել է, լաւ է արել, իր օջաղն է... բող իր տուն ու տեղին, իր դարդ ու ցարին կենայ, լաւ չի, լաւ չի, ասում եմ, քուրիկ, կը փոռնանի՞...

Փէրի. (Աւելի եւ ավելի սարսափած) Ռեա Մնօ, ուես Մնօ, ոտդ համբուրեմ, վերեւ Աստուած, ներեւ՝ դու, ասա, քե մի բան գիտես, օջաղիդ, որդիներիդ սիրուն, ինչպիսիք... հա, հա, չեմ բողնի, չեմ բողնի, որ դուրս գնայ... ա՛յ, էս դուրը կը փակեմ, կը նստեմ դրանը շան պէս, բող մարդ չիմանայ, բող մարդ չը տեսնի...

ՌէՍ ՄՆՅ. (Ստանց ուշք դարձնելու Փէրիին) Էս քանի օր է, գիւղում ինչ որ մարդիկ են երեւում... ինչ որ

գնալ-գալ, փախուկ... բոլորն Աստուծոյ ոտովն էլաւ, խարուն Փէրի. աղջիկ էլ ունի, նա էլ դիմը չի, ասում եմ, խարուն Փէրի. դու մեղք ես, մեղք ուստի եմ... Ես իմն ասացի, մնացածը դու գիտես... բող չեքայ գիւղերը, բող չըխառնի գիւղերը: (Ոտքի է կանգնում ու դուրս գնում):

Փէրի. (Մի անժամանակ մնում է տեղում քարացած. մտքը շրթունքին է դնում, ապա կանչում է բարձրաձայն) Հիւրի, ա՛յ, Հիւրի, (Հիւրին վազէվազ դուրս է գալիս խրճճից):

### ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԳ

Փէրի. Հիւրի, որդի, հայրիկդ ո՞ւր գնաց երկու օր առաջ:

Հիւրի. Չը գիտեմ, տա՛ի:

Փէրի. Ե՞րբ կը գայ:

Հիւրի. Չը գիտեմ, տա՛ի, գուցէ այսօր... չը գիտեմ: Ո՞վ էր այստեղ:

Փէրի. (Մտախոհ) Ռեան էր... այնպէս եկել էր, Աստուծոյ եր հարցնում... որդի, ինչո՞ւ է շարունակ գնում գիւղերը:

Հիւրի. Չը գիտեմ, տա՛ի:

Փէրի. Այս շատ ժամանակ դո՞ւ էլ ես գնում:

Հիւրի. (Շփոթուած) Ե՞ս... Էս այնպէս, հայրիկի հետ, մանգալով:

Փէրի. (Մտացկոտ ու վախով) Չեմ հասկանում... չեմ հասկանում... Տե՛ր, դու ինչպիսիք... գնանք, Շողիկ: (Դուրս է գնում Շողիկի հետ):

Հիւրի. (Մենակ, լուռ ու մտախոհ) Նազե, ա՛յ Նազե. (դուրս է գալիս Նազէն):

### ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Հիւրի. Նազե, քուրիկ, ուես Մնօն ի՞նչպիսի մարդ է:



**ՆԱԶԷ.** Մարդ չի, մեծերին՝ շուն, խեղճերին՝ բուրեճի. ի՞նչ կայ որ, նա՞ որ այստեղ:

**ՀԻՒՐԻ.** Տասիկն ասում եր, որ եկել եր հայրիկիս սեանելու:

**ՆԱԶԷ.** Յեսո՞յ:

**ՀԻՒՐԻ.** Թողել գնացել է:

**ՆԱԶԷ.** Ասել է, սասանայի կօշիկը դեռ չի վերջացրել, գնացել է վերջացնի գայ: Հու՛ռ, գեհեճի բաժին դառնայ... բերանից բոյն է կարկրում, օձի վրայ բքի, կը սասկի:

**ՀԻՒՐԻ.** (Խօսքը փոխելով) Երեխան քնե՞ց... արի այստեղ, փոքրիկ, այսպես նստեճի ծառի տակ, մինչեւ տասը կը գայ, գուցէ եւ հայրիկը: Նայի՛ր, ի՞նչ սիրուն է այս ծառը, Նագե, եւ որչա՞փ մեծ է. բայց ինչ շուտ եմ դեղնել տեսնեճի. ինչո՞ւ է այդպես:

**ՆԱԶԷ.** Ամեն բան մեզ մօտ շուտ է դեղնում. չե՞ դու էր ասում, որ մեր արեւն արնագոյն է, ինչ զարմանք, որ նրա արնագոյն ցոլեճի տակ ամեն բան բօշուճում է ու խամբում վաղաժամ... էհ, եղ բողեճեճի, մի բան հարցնեճի, կատե՛ս:

**ՀԻՒՐԻ.** Ի՞նչ, փոքրիկ:

**ՆԱԶԷ.** Մի բան, որ ձեր եկած օրից արեճիս վրայ է նստել, եւ միտ լուր էմ. ասա ինձ, Հիւրի ջան, ո՞րտեղից եճ գալիս դու եւ հայրիկդ:

**ՀԻՒՐԻ.** Հեռու, հեռու տեղերից, որոնք անուն չունեն. փոքրիկ, ինչո՞ւ եւ հետաքրքրում այդքան:

**ՆԱԶԷ.** Թագցնում ես... բո՞ղ այդպես լինի. բայց ո՞ւր եճ գնում այդպես յանախ, գոնէ այդ իմանամ:

**ՀԻՒՐԻ.** Գիւղերը, այդ ծածուկ չէ, եւ ու հայրիկս այնպես սիրում եմ ժողովրդի մեջ լինել, ասել խօսել, դա հին սովորութիւն է, փոքրիկ, ամեն մարդ մի սովորու-

թիւն ունի, այդ էլ մերն է. ա՛յ, դու էլ սովորութիւն ունես երեխայիդ համար երգել նոյն օրօրը:

**ՆԱԶԷ.** Ախ, այդպե՛ս... դու՛ք էլ իմ օրօրի՞ցս եճ խօսում:

**ՀԻՒՐԻ.** (Նայելով դէպի պարտէզ) Նագե, ի՞նչ սիրուն է վերջալոյսը. (վեր է կենում եւ մօտենում ցանկապատին)... Այս ի՞նչ արագիլ է, փոքրիկ, այսօր Շողիկը վախեցնում եր արանից:

**ՆԱԶԷ.** (Մօտենում է նրան) Այս բոչո՞ւնը, օ՛, դա մեր տան անեճիքն է, բէխեր բոչուն է. վարդանը դաճից բերեց նրան, բէք կոտրուած է. բերեց եւ նոյն օրն այն սեւն եկաւ մեր գլխին: Վախեցնում եմ ձեռք տալ, վախեցնում եմ, քէ չէ այս մասնեղովս կը սեղմեմ նրա անիճուած կոկորդը, փետուրները կը պոկեմ, քանուն կը տամ եւ դիակը կը ձգեմ շերտին. քանի դա կենդանի մնայ, ով գիտէ, էլ ինչեր բերի մեր օջաղի գլխին. բէխեր բոչուն է, ասում եմ, բէխեր բոչուն:

**ՀԻՒՐԻ.** (Աչքը չը հեռացնելով ժողովրդից) Փոքրիկ, արեճիս բոչունն ինչո՞վ է մեղաւոր, որ դժբախտութիւն պատահեց ձեզ. չե՞ որ արագիլները բնաւ բէխեր չեն:

**ՆԱԶԷ.** Բէխեր բոչուն է, ասում եմ, եւ մեկը բէխեր է... արա ոտով չարք մտաւ մեր տուն. գոնէ քեւն էլ չի լաւանում, որ բոչել կարողանայ ու կորչի գնայ. այսպես կանգնած է ամբողջ օրերով եւ նայում է երկրեփին, կարծես սպասում է, քէ էլի ինչ կրակ պիտի մաղուի մեր գլխին:

**ՀԻՒՐԻ.** Խեղճ բոչունն իր ընկերներին է նայում, Նագե, որոնք անցնում են վերեւից եւ որոնց ինքը հասնել չի կարողանում:

**ՆԱԶԷ.** Չէ, չէ, բէխեր բոչուն է, օօ՞. եքէ էլի մի բան պատահի... (Դուրը բացում է և ներս են մտնում բակը Բարկէնն ու Սուրէնը):



## ՏԵՍԱՐՍՆ ՎԵՅԵՐՈՐԴ

**ՀԻՒՐԻ.** Բաբկե՛ն, Սուրե՛ն (նետունւմ է ղէպի նրանց և ձեռքերը սեղմում խանդաղատանքով նախ մէկին, ապա միւսին). ո՞րսեղից, ո՞ր նանապարհներով... Նագե, ա՛յ Նագե, սես հայրիկիս բնկերներին:

**ՆԱԶԷ.** (Մօտենալով ու գլուխ տալով): Բարի է եկել, ախպերներ, ձեր տունն է:

**ՀԻՒՐԻ.** Խօսեցե՛ք եե՛, ո՞ր սարերով, ո՞ր ձորերով, էլ, քափառականներ, ի՞նչպէս է, ի՞նչպէս է, ասացե՛ք:

**ՍՈՒՐԷՆ.** Դո՛ւ ինչպէս էս, դու, անհանգիստ եղնիկ, Ասլանն ո՛ւր է, ի՞նչ է անում:

**ՀԻՒՐԻ.** Չը կա՛յ, քանի որ է չը կայ. գիտե՛ք էլի, նա քանը նստող չի... գուցէ այսօր գայ... Վահ, չեմ ասում նստեցե՛ք, անձու՛տ յոգնած կրլիներ. ա՛յ այսեղ, հենց ծառի սակ, սիրուն երեկոյ է, երեւի քաղցած է:

**ԲԱԲԿԷՆ.** Ո՛չ, ո՛չ, բնաւ քաղցած չեմ, բայց կը նստեմ. (տեղ նն բռնում):

**ՆԱԶԷ.** Դե, դուք խօսեցե՛ք, էս կերքամ երեխայի մօս. (զնում է):

**ՀԻՒՐԻ.** Հօրեղբօրս կիցն է, այրի է, ամուսնուն սպանել են հերու. քմբոս հոգի է, ձեր փնտրածը, ցառու գայրոյթի ծով ունի հոգում, գեղջկուհու նման չի, հազար տղամարդ արժի... դե՛, ասացե՛ք եե՛... տեսա՞ք հովիտը, լաց է ամեն կողմ... հայրիկս ինչպէս էր սպասում ձեզ...

**ՍՈՒՐԷՆ.** Իսկ դու, ի՛մ սիրուն եղնիկ, դու ո՞ւմն էիր սպասում... տես, ողջ առողջ բերել եմ (ցոյց է տալիս Բաբկէնին):

**ՀԻՒՐԻ.** Սուրեն, Սուրեն, դու դեռ չես բողբ կասկներդ. դու գիտես, որ էս երկսիդ էլ սպասում էի, երկսիդ էլ կարօտել էի... ձանապարհին տեսա՞ք դղեակը:

**ՍՈՒՐԷՆ.** Կը քանդենք:

**ԲԱԲԿԷՆ.** Սուրեն, մագերդ սպիտակեցին, էլի մի փոքր զգոյց չես:

**ՍՈՒՐԷՆ.** Դու դարձեալ սկսեցիր քո խրատները. դե որ այդպէս է, դուք սկսեցե՛ք ձեր անոյց փափուկը այս սիրուն ծառի սակ, իսկ էս մեկ կերքամ գիւղը նայելու, տեսնեմ, շները հաշո՞ւմ են, քե ոչ:

**ՀԻՒՐԻ.** Ախր յոգնած էս... նսիր, հանգստացիր:

**ՍՈՒՐԷՆ.** Ե՛ս... յոգնած... պառաւե՛լ եմ, ինչ է... այդ Բաբկէնին ասա... Յեսոյ արդար խօսեմ, դուք էլ խօս շատ էք ուզում, որ էս մի կէս ժամով շնորհս պակսեցնեմ էս սիրուն ծառի սակից... դեհ, դուք կողացե՛ք, աղաւնիներս, կողացե՛ք, ձագերս... էս հիմայ կը գամ:

**ԲԱԲԿԷՆ.** Սուրեն, Սուրեն (նրա մեկնելուց յետոյ) տեսնո՞ւմ էս, միտս նոյնն է...

**ՀԻՒՐԻ.** (Երկար և ակնապիշ նայում է Բաբկէնին խանդաղատանքով լեցուն հայտնացրով, ապա մօտենում է, բռնում զոյգ ձեռքերը): Յեսո՛յ... Բաբկէն, իմ Բաբկէն, ինչպէս էի կարօտել քեզ (համբուրում նն): Քանի քանի անգամ անապատեղ նստած երկար, երկար մտածել եմ քո մասին, մեր այստեղ նստած երկար, երկար մտածել եմ քո մասին, մեր հակասագրի մասին. Բաբկէ՛ն, մենք հանդիպեցինք իրար, որպէս երկու մոլորուած աստղեր ցառուս անհունութեան մէջ: Եւ մեր սե՛րք... էս կուզեի, որ բնաւ չը լինէր այդ սերք... ո՛վ գիտե՛...

**ԲԱԲԿԷՆ.** Օ՛, լուռ, լուռ, մի ասիր այդ, իմ Հիւրի, իմ գողտիկ հեծեսակ, կեանքի տառապանքս հանապարհին իմ գողտիկ հեծեսակ, կեանքի տառապանքս ծաղիկ, որ հեծացբուսած դու մեծաւոր ու բուրաւատ ծաղիկ, որ հեծացբուսած էս իմ խաչի բերք, գուրգուրում իմ անցնում էմ հայեացքը... էս ապրում եմ այդ սիրով էս անում եմ այն, ինչ հանելի է քո լայն, ուժեղ հոգուն, որ իմ հոգին է, քո քննոյց արտին, որ իմ սիրն է: Հիւրի, Հիւրի, քո՛ղ էս ապրեմ, իմ վտանգ, իմ գուճատ դիցունքի: Թող, բող, որ երազեմ, գուցէ, անկարելին: Ի՞նչ է ողջ կեանքը,



եքե ոչ մի երագ, երա՛գ: Թո՛ղ, որ երագեմ: Վնիս հայ-  
եացիդ խորութեան մեջ բող սուգուի իմ հոգին, ինչպէս  
կարապը կապսաւուն լնի խորեւում, բո՛ղ այնտեղից  
փողեմ յոյգեր ու սեկեր, մեկը մեկից վառ, մեկը մեկից  
ուժեղ, եւ բոլորը երագների պէս դիւրական, հմայիչ:

ՀԻԻՐԻ. (Երազուն և աչքերը ծառի ոստերին յառած) Իմ  
հոգու խորում լոկ ցաւն է բուն դրել, արժիս մեջ փեւր  
են անել եւ նրանց վրայ վիճեն է հեծեծում, իմ խեղն բա-  
փառական...

ԲԱԲԿԷՆ. Մե՛ծ ցաւը, Հիւրի, մե՛ծ վիճար, աշխարհի  
ցաւն ու վիճար, որ փողել եւ մեծ սառապանքի ծոցից:  
Եւ այն փեւրն իմ արտում կը սնկեմ եւ վճիս արցունքով  
կը ցողեմ, բող հոգիս հեծեծայ ֆոնի հետ, մինչեւ կը-  
ծագի վարդագոյն օրը, մինչեւ...

ՀԻԻՐԻ. Թողնենք այդ, Բաբկեն ջան... հայրիկս  
մաւրում է, եւ մութ, փոքրկաբեր ամպը գալիս է կա-  
մաց կամաց... (Գլուխը մտնոցնում է և փսփսուկով) Գիտե՛ս,  
այնտեղ արդէն ֆոնի շաբաթ է փորում են... գիւրեր ցերեկ  
փորում են եւ դիմում դեպի դրեակի սակր... Հոյակապ  
ճրագիր է, որ միայն հայրիկս կարող էր յղանալ... վեր-  
ջին դասասանն է լինելու... եւ սեսայ այդ անցքը, որ  
վիճապի պէս գալարում է գետնի սակ իր թիկունքով  
դժոխքը խորակելու համար:

ԲԱԲԿԷՆ. Իսկ գիւղե՞րը...

ՀԻԻՐԻ. Գիւղերը եռում են ու շարժում. հարթա-  
վայրը ծփծփում է ծովի պէս... հայրիկս դադար չունի:  
Դաւերի բոյնն է մերկում սանջուած ժողովրդի հոգում.  
հագար կողմից ու հագար ձեռով հսկայական հեղեղը  
ուռչում է, բարձրանում. նա կամ մեզ էլ կը արբի, կը  
սանի կամ կը սեսնենք վերջապէս արդարութեան ու  
ազատութեան յարթակը... Եւ հայրիկս մաւրում է,  
մաւրում է... ասել է, ժամը մօտ է... անցեալ օրը նա  
մեղմիւ երգ էր մումում, դա նշան է, որ հոգին գոր-

ծում է ուժգին քափով... Հա՛յրիկ, հայրիկ, եւ պաճսում  
եմ քեզ:

(Ներս է գալիս բակը Սուրէնը):

## ՏԵՍԱՐԱՆ ԵՕԹԵՐՈՐԴ

ՍՈՒՐԷՆ. Վայ, վայ, so կասարեալ օյին է եւ  
գիւղի բանը. շներն էլ չեն հաչում, դաճից դարձողները  
երգ չունեն, ինչպէս դիւահարած ընկնաւորներ լու-  
քեամբ փախչում ու ծածկւում են իրենց սներում: Ա՛հ,  
նգովեալ դղեակ:

ԲԱԲԿԷՆ. Սուրեն, Սուրեն...

ՍՈՒՐԷՆ. Հը, ի՞նչ կայ, չը լինի՞ քե շուտ եկայ.  
կուզե՛ք էլի գնամ, ախ ջահիլներ, ջահիլներ. գրողը սանի  
քեզ, Սո՛ւրեն, դու իսկի ջահիլ չեղար:

ՀԻԻՐԻ. Դու խօսւ շարունակ ջահիլ ես:

ՍՈՒՐԷՆ. Էհ, հաւանողն ո՞վ... (բայլում է դէպի  
պարտէզի ցանկապատը) վան, եւ ինչ է, so՛, եւ ի՞նչ արա-  
գիլ է, եւ եր պակաս:

ՀԻԻՐԻ. Հա, հապա, դա մի հետաքրքիր պատմու-  
թիւն ունի. (մտնում են Բաբկէնի հետ):

ԲԱԲԿԷՆ. Ի՛նչ սիրուն է եւ ի՛նչպէս իսուր.  
խե՛ղն, ինչո՞ւ է մնացել այսեղ:

ՀԻԻՐԻ. Թեւը կորում է, դաճից են բերել եւ  
էլ չի հեռանում այստեղից. հարսս նրան համարում է  
բէխեր, եւ վախենում է ձեռք սալ, քե չե, ատում է, վա-  
րուց սպանած կը լինէր:

ՍՈՒՐԷՆ. Լաւ է, ինչ ասեմ. համ բէխեր է, չարա-  
գուշակ, վնասակար, համ էլ վախենում են ձեռք սալ,  
վնասել. իսկ եւ իսկ են դղեակը... որից ամենքն են  
վնաս կրում, որին համարում են է՛ւ չար, է՛ւ բէխեր,  
սակայն մինչեւ այժմ էլ կանգուն է:

ՀԻԻՐԻ. Հարսս հաւատացած է, որ սրա ոտով է



չարք ներս մտել այս յարկի սակ, որովհետեւ արա բերուած օրք հօրեղբայրս ե սպանուել: Այժմ էլ նա վախենում է, քե էլի բան կը պատահի: Այնպէս չէ՞, Բաբկէն, նախապաշարմունք է, ի՞նչ կարող է պատահել:

**ԲԱԲԿԷՆ.** Իհարկէ ոչինչ, ի՞նչ կարող է պատահել. խեղճ բռնուն, տես, ի՞նչպէս նայում է մեզ, ասես, հասկանում է, որ իր մասին ենք խօսում. արագիլը խեղճ, լաւ բռնուն է:

**ՀԻՒՐԻ.** Հա՞... ես նրան լաւ, լաւ խնամում եմ. որչափ դժբախտ պիտի լինի նա այժմ՝ իր կոտորուած քեւով. երեւի, շարունակ բարձունքներ է երազում, եւ երկնքի կառօնով այրում. (յանկարծ ներս է մտնում Սալանը հետն էլ մի խումբ երիտասարդներ):

### ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ.

**ՀԻՒՐԻ.** (Նետուելով դէպի հայրն և փամածուելով, համբուրելով նրան) Հա՛յրիկ, հա՛յրիկ, տես ո՞վքեր են եկել:

**ԱՍԼԱՆ.** (Համբուրելով աղջկան) Վահ, դո՞ւք էք, Բաբկէն, Սուրէն (համբուրում է). իսկ ժամանակին եկաք. արանք էլ (ցոյց տալով գիւղացիներին) մեր նոր ընկերներն են, նայեցէք, բոլորն էլ հողի մարդիկ են, գետնին կուացած, բայց էլ կուանալ չեն կարողանում անիրաւ ցաւից: Նայեցէք արանց նակասներին, ուր սանջանքն ու աշխատանքն արտերի պէս աղօսներ են ձգել: Այս բազուկները տեսէք, ասես բրոնզից են ձուլուած, բայց վաղուց հետեւ մոռացել են հարուածել: Այժմ տառապանքն ու անիրաւութիւնը, վերջապէս, բարձրացրել են արանց նակասները, եւ սեղմել բռունցքները: Սրանք այժմ ծառացել են իրանց արդար զայրոյթի բոլոր բափով եւ պատրաստ են հարուածելու... եւ արանք մեր ընկերներն են, ինչպէս եւ նրանք, այն միւսները, որոնց հարուածների սակ երկարն է սքնուում եւ որոնց կաշիները բարկ հնցներն է լիզել բոցոս գործանցներում:

**ԳԻՒՂԱՅԻՆԵՐ.** (Խառնիխառն) Հա, հա, մենք ձեզ հետ ենք մինչեւ մահ:

**ԱՍԼԱՆ.** Ես ձեզ ասում եմ, աշխարհում ամեն բան վախճան ունի, սանջանքը չի կարող անվախճան լինել: Ես ձեզ ասում եմ, մինչեւ որ ազատ հողմերը չըլիզեն մեր ոսկորները, մինչեւ որ մեր գունաս նակասների վրայ գերեզմանի հողը չը փռուի, որպէս յաւիտեանական սփռոց, մինչեւ որ հսկայական պայքարից յետոյ, մեր օրհասի հառաչանքները չը գնան հեծեծելու մութ գիշերներին սեւ անտառներում,—եւ մարտիւնն ու արդարութիւնը չեն կարող յաղթանակել: Ես ձեզ ասում եմ, կարմիր նզովքն է բաւել մարդկային նակասագրի վրայ, եւ ազատութիւնը խեղճերի ու ապուշների զառանցանքն է մնալու, երբ մահը զարհուրանքից ու արիւնքից շաղախուած կարմիր պատուանդան չը պատրաստի նրա համար: Ես ձեզ ասում եմ, մահ եմ բերել ձեզ համար: Ասացէք, կարո՞ղ էք նայել նրա աչքերին առանց գունասուելու, կարո՞ղ էք մեռնել...

**ԳԻՒՂԱՅԻՆԵՐ.** Սրանից վաս ի՞նչ կարող է լինել, մեռանք, փոքրուեցիք միզներս ձուելով. մահը հագար անգամ լաւ է:

**ԱՍԼԱՆ.** Բաբկէն, Սուրէն, առաջնորդեցէք արանց, ձեր գործակիցներն են ու ձեր ընկերները. հողի մարդիկ են, եւ դուք երկաթի: Երկարն ու հողը երբ դաշինք կուեն, էլ ոչ մի նակաս չի կուանալ, ոչ մի քիկունք չի ծալուի անողորմ բեռի սակ:

**ՍՈՒՐԷՆ.** Այ, այսպէս խօսիր տնայեցեալ. պարզ ասա, ո՞ւր պիտի է յարձակուել, ի՞նչը հրդեհել, ո՞ւր միւս աշխարհն ուղարկել: Թե չէ ասում ես, «Ես ձեզ մահ եմ բերել»... Ինչո՞ւ... դեռ քանի՞սը պիտի ընկնեն, մահ եմ բերել... Վահ, ես ի՞նչ է, Ասլան, մինչեւ որ հերքը Սուրէնին հասնի... Վահ, ես ի՞նչ է, Ասլան, ես ո՞վքեր եկան. (մի խումբ տարիքաւոր գիւղացիներն հետ մտնում է ռէս Մ'սօն. Հիւրիկ հրաւերով Բաբկէնն ու Սուրէնը ներս են մտնում խորձիթ):



### ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

**ՌԷՍ ՄՆՕ.** (Հազարով, տնքարով և ձեռնափայտին յե-  
նուած) Բարի իրիկուն: Դու հազար բարի ես եկել, Ասլան  
ախպեր. եկար հասար էլի՞. վա՛յ դու հազար բարի գաս,  
ախպօր տղայ:

**ԱՍԼԱՆ.** Աստու բարին, ուես Մնօ. առաջ արի,  
առաջ արի, նստիր:

**ՌԷՍ ՄՆՕ.** (Մի երկար ու խորհրդաւոր հայեացք է  
նետում զհեղացիների վրայ, որոնք ցրիւ եկած այս ու այն  
կողմը խօսում են. ապա նստում է ծառի տակ միշտ տնքարա-  
լով, դուրս է քաշում ծխախոտի քսակն և չիբուխը պատրաս-  
տում դանդաղութեամբ): Հա՛, նստեմ, որդի, ձեռութեան  
տեր մեռնի, մեզքս էլ չի դիմանում. (ուշադիր նայելով):  
Դու էլ համա աշխարհներ ոտի սակ տւիր, հաա՛... նայեմ  
մեկ... չե, դեռ չես ձեռացել: Բանի՞ տարի է:

**ԱՍԼԱՆ.** Երեսուն տարի կայ, ուես Մնօ...

**ՌԷՍ ՄՆՕ.** Հա, երեսուն տարի կը լինի, օղորմա-  
ծիկ հերդ դեռ կենդանի եր. միտ կասեր, ուես Մնօ,  
այքս ես տղայիցս ջուր չի խմում. սա առաստաղ սեւա-  
ցնող, տունը նստող չի. ինչպէս բոշունը մի փեփ վրայ,  
հնայէս է տունը: Օղորմածիկի խօսքը կասարուեց, ու գնա-  
ցիր էլի, գնացիր դարիբուրիւն:

**ԳԻԻՂԱՅԻՆԵՐ.** (Դժկամութեան նշաններ են ցոյց տալիս  
ուէս Մնօի ներկայութեանը):

**ԱՍԼԱՆ.** Էհ, ի՞նչ անենք, ուես Մնօ, ամեն մարդ  
մի նանապարհով է գնում ես աշխարհում, իմն էլ հայէս  
էլաւ:

**ՌԷՍ ՄՆՕ.** Հա, իհարկե, որդի, ամեն մարդ մի  
նանապարհով է գնում, միայն նանապարհը բարի լինի:  
Է՛հ, փառք Աստու, էլի եկար հասար մօրդ. խեղճ պա-  
ռուն ինչե՛ր տեսաւ, ախպերներդ... Է՛հ, ի՞նչ ասեմ, ո՛ր  
մեկն ասեմ, մերն էլ հայէս է. հայէս ենք ծնուել, հայէս  
էլ կերթանք. զուրումի տեր ենք, Աստուած է տուել:

**ՄԻ ԳԻԻՂԱՅԻ.** Ռես Մնօ, ուես Մնօ, հայէս ասե-  
ցիք շարունակ, որ մեր տունը քանդեցիք: Զուրումը մե-  
նակ մեզ համար չի, մենք էլ մարդ ենք: Էն սարի գլխին  
քառած դրեակը մեր արիւնը ծծում, մեր հոգին քաղում է.  
Աստուած զուրումը չի տուել միայն մեզ համար... մենք էլ  
մարդ ենք...

**ՌԷՍ ՄՆՕ.** (Զայրացած, ընդհատելով) Զե՛նդ, ձե՛նդ...  
լեզուն տես. ո՛վ է բերան բաց անում դրեակի վրայ.  
Բարերը, պատերը ակամօ ունեն արք, քանի՞ գլխի տեր  
ես, որ բերանդ եղպես ցուում ես... Ասլան, որդի, ես  
ինչե՛ր եմ լսում, էդ նրա բերնի խօսքը չի: Ռանաքի լե-  
զուն ետեմ երկար չի կարող լինել: Ռանաք ասածդ  
իշխանի ոտի հողն է, նրա սուտերի սակ պիտի ապրի:  
Գլխիդ կը տայ, սո՛ւ. կաշիդ կը կերթի՝ սո՛ւ, վաս-  
տակդ կը տանի՝ սո՛ւ. միտ սո՛ւ... Հե՛... (միտքը  
ընկելով) Զուր չեն սպիտակել արանք. մազերիս համբան-  
քով ես ձեռ եմ կերել մեծաւորներից, եւ ամեն մի ձե-  
քով մի իմաստութիւն սովորել: Ժպիտք կը փրկի ժպի՛տք:  
Ժից մի իմաստութիւն սովորել: Ժպիտք կը փրկի ժպի՛տք:  
Հարուածի սակ՝ ժպտա՛, այդ կը հանեն՝ ժպտա՛, կը  
գրկեն, կը խլեն, կը յափճակեն, ժպտա՛: Ի՞նչ կայ որ,  
առօք բան չի. նա մեծաւոր է, ազնուական, դու ուսմիկ,  
ուսմաք, հայրքս նրա կրունկը քս գլխին պիտի լինի.  
ասում է, „ձեռք, որ կտրել չես կարող, համբուրիւր,  
գլխիդ դիր“: Էսպէս է աշխարհի բանը. վերից է կարգա-  
դրուած, նոր չի, նոր չի. հերերից, պապերից է մեզ հասել:  
Նրանք ապրել են, մենք էլ կապրենք...

**ՌԷՍԻ ԿՈՒՍՍԿԻՅՆԵՐ.** Իհարկե, իհարկե...

**ԱՍԼԱՆ.** Ռես Մնօ, ուես Մնօ, սխալում ես. դուք  
չեք ապրում. այստեղ գազան, օձ, գեռուն, սողուն, ուղ  
ապրում են, դուք չեք ապրում: Ես տեսա՛յ... ամեն կողմ  
այս աշխարհում ստակում, լաց, հառաչանք, քաղց, աւեր,  
անապատ... Ո՛չ, սա կեանք չէ, այլ գեներ, որի մեզ այր-  
ւում, փորորում է մի անտեր, անգիտակից ժողովուրդ:  
Հազար հազարներ են սնում, միտք քաղած. անբիւ-  
նակասներ են կուացած, արիւն արցունք լայն համար.



գետինը չանգոտելով կոծացած են ցրանց ձեռները, եւ միտ ղատարկ: Այնքան լացողներ, որոնց լսող չը կայ. այնքան նիչեր, կրծքերի սակ խեղդում: Մայրերի չորացած կրծքերից քոյն են ձուլում հիւժուած մանուկները, եւ ծերերը քաղցած ու ձկկաչոք սողում են մոխիրների մեջ: Եւ այս բոլորը մի խումբ մարդակերպ հեռուների համար, որոնք լողում են գարշանքի ու պղծութեան մեջ ու լափում, կոփում, աւերում, կոտորում: Սա կեանք չէ, ուես, այլ գուլումների գուլումը... Աւխարհում իրաւունք ու արդարութիւն կա՞յ, քե ոչ:

ՌԷՍ ՄՆՕ. Չը կա՞յ...

ԱՍԼԱՆ. Պե՞տ է ձեռք բերել:

ՌԷՍ ՄՆՕ. Չես կարող, ասում եմ, չես կարող:

ԱՍԼԱՆ. Հազար գլխանի հսկան, ժողովուրդը ամեն ինչ կարող է: Ամեն մի խրճրում մի մի փոքր գայրոյք կայ, ամեն մի հոգում մի մի փոքր կայծ կայ. խառնիր ու շարժիր ցրանց, եւ սիեզերքը կը հրդեհուի:

ՌԷՍ ՄՆՕ. Չես կարող, ասում եմ, չես կարող:

ԱՍԼԱՆ. Հապա այսօր արցունք, արիւն, ցա՞ւ, անցա՞նք...

ՌԷՍ ՄՆՕ. Ասում եմ սուեյ:

ԱՍԼԱՆ. Ոճրագործ է քո Ասումը:

ՌԷՍ ՄՆՕ. Մեղայ քեզ Ասում, մեղայ քեզ. *(նորի կանգնելով)*: Գնա՛ այստեղից, հեռացի՛ր ուրիշ աւխարհներ. քոյ մեզ մեր ցաւի մեջ տապակուենք. քո խօսքերից արիւն է կարկրում. եւ խեղճ ու կրակ անգեհներին կրակի մեջ մի՛ ձգիր. տա՛ր փեշիդ արիւնն ուրիշ կողմ, ուրիշ աւխարհներ:

ՌԷՍԻ ԿՈՒՍԱԿԻՅՆԵՐ. Հա՛, հա՛, գնա՛ ուրիշ աւխարհներ...

ԱՍԼԱՆԻ ԿՈՒՍԱԿԻՅՆԵՐ. Նա չի գնա՞յ, նա չը պե՞տք գնա՞յ. մենք անգեհներ չենք:

ԱՍԼԱՆ. Արիւնի մեջ ծփում եմ, դժբախտ ծերունի. երբեք սա իմ հայրենիքս էլ չը լինէր, եւ դարձեալ կը գայի այս արիւնի մեջ, որովհետեւ տառապանքն ու դժբախտութիւնը հայրենիք չունեն: Տանջումներն ու կեղեքումները եղբայրներ են, երբ նոյն իսկ ջոկ ջոկ ասուղերի վրայ ապրեն...

ՌԷՍ ՄՆՕ եւ իր ԿՈՒՍԱԿԻՅՆԵՐ. Հեռո՛ւ, հեռո՛ւ մեզցից. *(պատրաստում է հեռանալու, դրսից լանկարծ լսում է Ջիննիի ձայնը)*. „Չուլո՛ւմ... գուլո՛ւմ“: *(նորս է ընկնում մի ձեռք զիւղացի վիրատուր, արիւնածածկազ զլխով ու պատառոտուած շորերով)*:

### ՏԵՍՍՐԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՎԻՐԱՒՈՐ ԳԻՒՂԱՅԻ. Ռես ՄՆՕ, տունդ քանդուի. դու ո՞ւր ես, ձեռքից գնացի՞նք. ելի եկել են անօրէնները, հարկ են ուզում: Մի նոր, մի նախապահ. տես իմ հայր:

ՌԷՍ ՄՆՕ. Վճարի՛ր, հարկը վճարի՛ր:

ՎԻՐԱՒՈՐ ԳԻՒՂԱՅԻ. Տունդ աւերուի, սրանով քանի՞ անգամ եղաւ. մնացել է միայն, որ տան գերանները ծախսիս:

ՌԷՍ ՄՆՕ. Ծախիր ու վճարիր, իշխանի հարկն է. *(նորս է մտնում մի կին լեղապատառ, երեսը ջանգոտելով ու ձգալով)*:

### ՏԵՍՍՐԱՆ ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ

ԿԻՆԸ. Աղջի՛կս, աղջի՛կս. տառան գաւակիս, հարկի տեղ տառան...

ՋԻՆՆԻ. *(Դրսից)* Չուլո՛ւմ. գուլո՛ւմ. *(նորս է ընկնում Ջիննին մրրկի պէս, գրկած բերելով գունատ, ուշաճափ Շողիկին և նրա լետեկից զլխին տալով հասնում է Փէրին)*.

ՋԻՆՆԻ. Չուլո՛ւմ, գուլո՛ւմ... *(Ընդհանուր սուկում)*:  
ՓԷՐԻ. Վախեցաւ, վախեցաւ գաւակս. անաս-



սուածները քանդում են գիւղը, լաց, շիւան... Տէր, դու  
հասնես. (խրձձից դուրս են գալիս Հիւրին, Բարկէնը, Սու-  
րէնը, Նազէն):

### ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ

**ՆԱԶԷ.** (Վրայ է պրծնում և գրկում ուշածափ Շողի-  
կին) Վա՛յ...

**ՓԷՐԻ.** (Ձեռքերն երկինք տարածած, աղօթք է մրմնջում):

**ՀԻՒՐԻ.** (Նոյնպէս, Շողիկին գրկած) Զո՛ւր, զո՛ւր...

**ՋԻՆՆԻ.** (Յետ յետ է քաշում, կայնում պատին ամ-  
բողջ հասակով և խնլազարի աչքերով նայում է պատերին)  
Զուլո՛ւմ, զուլո՛ւմ...

**ՌԷՍ ՄՆՑ.** (Ընկձուած, ի՛նչ անելը չը գիտէ):

**ԱՍԼԱՆ.** Ռես Մնո, կեա՞նք է այս... (ուժգին) Բաբ-  
կե՛ն, Սուբե՛ն... (վերջինները շտապով դուրս են ընկնում  
գիւղացիների հետ):



### ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ

Փերիի բակը. աւանային գիւեր. լուսինը մեղմու  
իջնում է դէպի արեւմուտք եւ նրա գունաս ցոլերի սակ  
առարկաները խորհրդաւոր պատկեր ունեն: Հիւրին մե-  
նակ յենուած է պարսեզի ցանկապատին եւ անորոշ ու  
լուռ նայում է հեռուն. մտածկոտ է: Բաբկէնը դուրս է  
գալիս խնթից եւ դանդաղօրէն առաջանում է դէպի  
Հիւրին:





**ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ**

**ԲԱՖԿԷՆ.** Ի՞նչ ես այդպես նայում, Հիւրի. սես, չը մեսես, դուրսը գով ե:

**ՀԻՒՐԻ.** (Առանց յետ նայելու) Չեմ մեսի... Ի՞նչպես ե Շողիկը:

**ԲԱՖԿԷՆ.** Լաւ ե, հաւասա՛, լաւ ե... Իզուր եք այդքան անհանգստանում. երկու անգամ աչքերը բացեց, մօրը նանաչեց, ջուր ուզեց:

**ՀԻՒՐԻ.** Իսկ սա՞՞ք... Ի՞նչ ե անում սաք:

**ԲԱՖԿԷՆ.** Դարձեալ աղօթում ե:

**ՀԻՒՐԻ.** Թո՛ղ աղօթի... այդ լաւ ե... աղօթքի գիտեր ե... սես, ինչպես յուսինը շտապում ե ծածկուել, Բա՛բկեն, եւ երբ նա ծածկուի, հազար սարիների խաւարը կը կուտակուի այս մի հասիկ գիշերուայ վրայ, եւ ասղերը կը դադարեն բարբելուց ու կը մարեն յանկարծ. վերջին դասասանն ե այս գիշեր, այնպես չե՞, Բաբկեն:

**ԲԱՖԿԷՆ.** Այո՛, իմ հրեշտակ, վերջին դասասանը:

**ՀԻՒՐԻ.** Եւ այնքան խաւարից յետոյ, արեալոյսը հրաշալի, անօրինակ ե լինելու, նա ողջ երկինքը հրդեհելու ե, այնպես չե՞, Բաբկեն, եւ յետոյ արե՛ւր...

**ԲԱՖԿԷՆ.** (Յետևից ընթրումը զրկում է նրա զրուխը) Այն արեալոյսը, հոգեակ, հազար սարիների արեալոյսերից պիտի հիւսուի, որոնք դեռ երբեք, երբեք չեն ծագել եւ որոնք միշտ փայլել են այս քոց հայեացքի մէջ:

**ՀԻՒՐԻ.** (Մեղմ փաղարջական ժպտով) ձեմարի՞ս... խօսի՛ր, խօսի՛ր, այդպես:

**ԲԱՖԿԷՆ.** Մի՞թե կասկածում ես, Հիւրի:

**ՀԻՒՐԻ.** Ի՞նչ լաւն ես, Բաբկեն, իմ ազնիւ, իմ խենք ընկեր: (Բազուկները տարածում է և փաթածում է նրա պարանոցով): Ի՞նչ լաւ ե այդպես... Ի՛նչպես սիրում եմ քեզ... սիրում եմ քո սերը, Բաբկեն, քո ուժեղ, քո խաւունկ սերը, որի մէջ լողում են մեր սանջուած հոգիները, ինչպես վեսոս, բունաւեր բոչունները ցաւոս անհունութեան մէջ... համբուրի ինձ, Բաբկեն... այսպե՛ս, այսպե՛ս... (Արագիւր յանկարծ թափահարում է իր թները խաւարի մէջ):

**ՀԻՒՐԻ.** (Յնդուելով): Ի՞նչ ե այն:

**ԲԱՖԿԷՆ.** Հանգիստ, հոգեակ, այն արագիւն ե, քափահարում ե իր քեւերը:

**ՀԻՒՐԻ.** Արագիւր քափահարե՞ց իր քեւերը, ասում ես, հա՞, Բաբկեն. արագի՞ւր... Ինչո՞ւ քափահարեց արագիւն իր քեւերն այսպես ու՛՛՛ գիշերին... կես գիշերն անց ե, այնպես չե՞:

**ԲԱՖԿԷՆ.** Ո՞վ գիտե, ի՛մ գողտրիկ, ո՞վ կարող ե հասկանալ դժբախտ բոչնի խղճուկ հոգին:

**ՀԻՒՐԻ.** Դժբախտ բոչո՞ւնը, ասում ես. ոչ, ոչ, նա էլ դժբախտ չի, այն բոչունը, որ կարողացաւ երկու քեւերն էլ քափիքափ սալ. երկու քեւե՛րն էլ, հասկանում ես, Բաբկեն: Նա դժբախտ եր, երբ երկնից գահավե՛ժ՛ անգոր եր բարձրանալու դեպի յուսաւար երբեր, անգոր եր սաւառնելու անհունութեան մէջ, ոտի սակ բողմելով աշխարհն իր սեւերով: Այժմ նորից քափիքափ տուեց իր քեւերը. նրանք նոր ոյժ ու զօրութիւն են ստացել ու փետուրներն երկարել են, այնպես չե՞, Բաբկեն:

**ԲԱՖԿԷՆ.** Անուշտ, փետուրներն երկարել են, քեւերն ոյժ ստացել եւ նա կարող ե վերստին սաւառնել:

**ՀԻՒՐԻ.** (Աւելի և ավելի աշող յուզմունքով): Այո՛, այո՛, նա կը բոչի այս առաւօտ, այն զարմանալի արեալոյսին, երբ երկինքը կը բոցավառուի, որպէս փքրած



վարդ, երբ հազար սարիների խաւարի կրծից դուրս կը ժայթի սափ, կենդանաւար արեւը, դարերի սառնամանիք կը հալուի եւ լեռնակասարները կը ժայտան օդային համբոյրներ ուղարկելով իրար. այն ժամանակ, Բաբկէն, այն ժամանակ, նա բաց կանի իր յաղը քեւերը, քափ կառնի ուժգին եւ կը սաւառնի դեպի նոր հորիզոններ, նոր աշխարհներ. այնպէս չե՞, Բաբկէն:

**ԲԱԲԿԷՆ.** Այո, այո, նա կը սաւառնի մեր պայծառ երկնքի երեսին, պատկերով վարդագոյն ու անուշաբոյր երեքը եւ առաջինը կողջունի հազար սարիների կրծից վեհօրէն բարձրացող կենսասու արեւը:

**ՀԻԻՐԻ.** (*Բարձրաձայն ողևորումներ*): Թռի՛ր, երգանիկ քոչուն, քռի՛ր դեպի երկնաբերձ բարձունքները, դեպի արշալոյսը, դեպի արեւը, բոլո՛ւրը, բալո՛ւրը, դեպի արե՛ւը... (*Ձեռներով ծածկում է աչքերն և լռում մի անժամանակ, ապա վերստին հայնացքը յառում լուսին*): Իջա՛ւ, իջաւ լուսինը, Բաբկէն, եւ երբ նա ծածկուի, խաւարը կիջնի, հազար սարիների խաւարը այս մի հասիկ գիշերուայ վրայ... Ո՞ւր է հայրս... հա՛յրիկ, հա՛յրիկ...

**ԲԱԲԿԷՆ.** Նա շուտով կը գայ, հանգիստ, հոգեակ. նա դուրս գնաց վերջին կարգադրութիւններն անելու եւ ինձ ասաց սպասեմ:

**ՀԻԻՐԻ.** Վերջին կարգադրութիւնները՝ վերջին դասասանի համար, այնպէս չե՞, Բաբկէն:

**ԲԱԲԿԷՆ.** Այո՛, վերջին դասասանի համար, այս գիշեր, այս գիշեր՛:

**ՀԻԻՐԻ.** (*Յանկարծ*): Բաբկէն, դու ինձ շա՞տ ես սիրում:

**ԲԱԲԿԷՆ.** (*Բռնում է նրա երկու ձեռները եւ խոր ու երկար նայում է աչքերին*): Հիւրի՛... (*Ապա պինդ համբուրում է*):

**ՀԻԻՐԻ.** Խոսացիր կասարել, ինչ որ խնդրեմ:

**ԲԱԲԿԷՆ.** Հիւրի, երբ ցանկութիւնը միշտ իմ նախասգիւրն է եղել:

**ՀԻԻՐԻ.** Հետեւիր հօրս այս գիշեր... նա ձեզ չի ստում, նա չի ասի երբե՛ք, բայց ես հաստատ գիտեմ, որ նա զարհուրելի բան է պատահասում իր գլխին... Ի՞նչ է, որոշել չեմ կարող, բայց ես զգում եմ այն, զգում եմ եւ դողում... նա այս օրերս մեղմիւ երգում է. օօ՛, ես միշտ սարսափում եմ, երբ նա երգում է. իսկ այսօր չափազանց ուրախ եր, անբնական ուրախութիւն, որ բղխում է նրա հոգու անդունդներից: Եւ յետոյ մի քանի անգամ ինձ պինդ պինդ համբուրեց, կարծես մէկն ինձ խլելու է նրանից: Վաս նշաններ են այս բոլորը, Բաբկէն, վաս նշաններ. օօ՛, երբ նրան մի բան պատահի.

**ԲԱԲԿԷՆ.** Ոչինչ չի կարող պատահել, հաւասա՛ր ինձ, հոգիս: Այս խորհրդաւոր ժամին ծայրայեղ զգայնութիւնն է ծանր գիշերուայ խոհերն են խօսում եւ մեզ, Հիւրի... Ես մենակ չեմ, բոլոր ընկերները հազար աչք կը շինեն, նրա կեանքի վրայ հսկելու:

**ՀԻԻՐԻ.** (*Երազուն*): Երբ նրան մի բան պատահի՛... (*Ներս են դալիս Ասլանն և Սուրէնը*):

## ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

**ՀԻԻՐԻ.** (*Նետում է դէպի հայրը*): Հա՛յրիկ, հա՛յրիկ: (*Գրկում է ու պինդ համբուրում կարօտով*): Ի՞նչպէս կարօտել եմ քեզ... ինձ բուռն է, քե վաղուց, վաղուց է, որ քեզ չեմ տեսել... Հա՛յրիկ, դու ինձ շատ ես սիրում, այնպէս չե՞... հա՛յրիկ, շատ սիրի՛ր ինձ... սիրի՛ր այնպէս, որ երբեք, երբեք չը բաժանուես ինձանից:

**ԱՍԼԱՆ.** Ի՞նչ է պատահել քեզ, իմ քաղցր գաւակ. իհարկէ միշտ քեզ հետ եմ, մի՛շտ, մի՛շտ: (*Կամացուկ երգ է մոմոմոմ*):

**ՀԻԻՐԻ.** (*Յետ մղելով նրան*): Ոչ, դու ինձ չես սիրում, դու ինձ չես սիրում... այ, երգում ես, անսիրտ



հայրիկ, ես գիտեմ այդ երգի խորհուրդը... օօ՛, քո երգը, քո երգը... Մի երգիւր այդպէս, աղաչում եմ, հա՛յրիկ, մի երգիւր, ես վախենում եմ...

**ԱՍԼԱՆ.** (Կատակի տարով): Լսո՞ւմ եք... Հիւրիս վախենում է իմ երգից... չեմ երգի, երբ կամենում ես, միայն իմացիւր, զա՛ւակս, որ երգելով թէ առանց երգի, ես եեզ շաս, շաս եմ սիրում:

**ՀԻՒՐԻ.** (Յուսահատ և լացակամած շեշտով): Ինչպէս ուրախ ես այսօր, ինչպէս ուրախ ես... այդ ուրախութի՛ւնը... այդ երգը... (Գնում է դէպի ցանկապատն և նայում ճեղքով):

**ԱՍԼԱՆ.** (Մի առժամանակ նրա յետևից նայելով): Հիմա դու ասա՛, Բարկէն, ի՞նչ արիւր:

**ԲԱՐԿԷՆ.** Բոլոր սեղերում եղայ. ամենքն իրանց դիրքերումն են եւ սպասում են ազդանշանին:

**ԱՍԼԱՆ.** Գաղտնի՞ք է:

**ԲԱՐԿԷՆ.** Խորին գաղտնիք:

**ԱՍԼԱՆ.** (Ձեռները շփելով): Այդ լաւ է, այդ լաւ է, մնացածը մեզից է կախում: Սո՛ւրէն, իմ կտրիչ, եեզ սեսնեմ:

**ՍՈՒՐԷՆ.** Ասում եմ սեսել, Ասլան, ախտս մերս մի հաս է ձեռն, երբ երկու ջուխս լինեինք, վայն եկել երսարել բոլոր դղեակները:

**ԱՍԼԱՆ.** Գեհ, տղերք, էլ մի ուշացեք, շատեցեք դէպի ձեռ դիրքեր... չը մոռանաք, կսպասեք որոշին ու առաջին բոցին, եւ այնուհետեւ... ես էլ շուտով այնտեղ կը լինեմ... Գեհ, զնաք բարի: (Համբուրում է): Հիւրի, գնում եմ տղերք:

**ՀԻՒՐԻ.** (Երկու քայլ է անում դէպի նրանց, ապա կանգ առնում, ձեռքով հրաժեշտի շարժում անում խիստ յուզումով): Գնաք բարի... (Բարկէնն ու Սուրէնը դուրս են գնում, Հիւրին և Ասլանը նայում են իրար լուռ-թանձր):

**ՀԻՒՐԻ.** (Առաջանում է դանդաղութեամբ և երկու ձեռքով կախում հօր պարանոցից): Հա՛յրիկ:

**ԱՍԼԱՆ.** Ի՞նչ է, գաւակս:

**ՀԻՒՐԻ.** Հայրիկ, տար ինձ եեզ հետ:

**ԱՍԼԱՆ.** Երեխայ մի՛ լինիր, Հիւրի. ինչ ունես այնտեղ. դու քո անելիքդ արիւր. քանի՛ ամիս է, դադար չունես, սնից տուն, փառցից փառց, գիւղից գիւղ քափառելով. այժմ հերթը տղամարդկանցն է... մայրիկին, Նազեին մայր, քո՛ղ ոչինչ չիմանան... Հա, ի՞նչպէս է Շողիկը:

**ՀԻՒՐԻ.** Շողիկը... չը գիտեմ... լաւ չի... ուշքը վրան չի...

**ԱՍԼԱՆ.** Լաւ չի՞ Շողիկը... Հա, հիւանդ է խեղճ երեխան... վախեցել է. վնաս չունի, կը լաւանայ, Հիւրի, կը լաւանայ:

**ՀԻՒՐԻ.** (Առանց ուշք դարձնելու): Տա՛ր ինձ եեզ հետ, հա՛յրիկ... ես վախենում եմ, դու երգում ես... հա՛յրիկ, ես... ես... (Ձայնը լանկարծ խզում է և նա սկսում է ուժգին հեծկլտալ, դէմքը թաղելով հօր կրծքում):

**ԱՍԼԱՆ.** (Երկու ձեռքով բռնում է նրա գլուխը, աշխատելով աջքերի մէջ նայել): Հիւրի, մա՛սաղ, ի՞նչ է պատահել եեզ... դու որ միշտ այնպէս արիասիրտ ես եղել... Հաւատա՛ ինձ, որ ոչինչ չի պատահի... ա՛յ, կը սեսնես... Գեհ, հանգստացիր... հապա, մեկ մայր ինձ... (Հիւրին նայում է): Ա՛յ, այսպէս... հապա մեկ ժպտա... (Հիւրին ժպտում է արցունքի միջոց): Այսպէս... դե, համբուրիւր ինձ, մեկ էլ, մեկ էլ... Տես, լուսինը ծածկուեց... Մինչեւ լուսաբաց... մինչեւ արշալոյս... մեծ արշալոյսը, Հիւրի... երբ կը ծագի այն արե՛ւը... Գեհ, մնաս բարի: (Շտապով դուրս է գնում):

**ՀԻՒՐԻ.** (Յետևից): Հա՛յրիկ, հա՛յրիկ: (Նետում է դէպի դուռը և կանգ առնում քարացած):

(Լուռ-թանձր):



**Փէրի.** (*Խրձձի ներսից*): Հի՛ւրի, այ Հի՛ւրի, ի՞նչ եղաւ քեզ... Գերս արի:

**Հիւրի.** Գալիս եմ, գալիս եմ:

**Փէրի.** (*Դռնից դուրս նայելով*): Կը մտես, որդի, այսֆան ժամանակ դրսում... ո՞ւմ ես սպասում, հայրիկի՞դ:

**Հիւրի.** Ձե, տասի. Գա եկաւ, գնաց:

**Փէրի.** Էլի գնա՛ց... Տե՛ր Աստուած... ինչի՞ վրայ է, Հիւրի ջան, ի՞նչ կայ... գնում եմ, գալիս եմ, փափսում... Հիւրի, գաւակս, ինչի՞ վրայ եմ:

**Հիւրի.** Ոչինչ, մայրիկ, ոչինչ:

**Փէրի.** (*Գլուխն օրորելով*): Ձեմ հասկանում, չեմ հասկանում. կես գիշերն անց է... ո՞ւր գնաց... ի՞նչ խաւար է... Տե՛ր, դու խնայես, այս երեխան էլ լաւ չի... կամաց կամաց ձեռքից գնում է... Ներս արի, մասաղ, Գերս արի:

**Հիւրի.** Գու գնա, մայրիկ, գալիս եմ. ցուրտ չէ, օդը լաւ է դրսում, գալիս եմ: (*Փէրին դուրս է գնում, մինչդեռ Հիւրին վերստին վազում է դէպի բակի դուռը, բաց է անում և նայում հեռուն, կարծես դուրս ընկնելու համար, բայց կանգ է առնում*): Խաւա՛ր է... ի՞նչ խաւար է... Ո՛չ մի ձայն... Գնացի՛ն եւ ես մնացի՛: (*Վհատած ու մտածկոտ լետ է գալիս, նստում է ծառի տակ աջքերը մի կէտի յառած: Լռութիւն. խրձձի դուռը բացում է և դուրս է գալիս Նազէն, դանդաղ քայլուածքով դիմում է դէպի Հիւրին, նստում է կողքին և ձեռքը քնքշում ձեռքը դնում է նրա ուսին*):

### ՏԵՍՍՐԱՆ ԵՐՐՈՐԴ

**ՆԱԶԷ.** Հի՛ւրի:

**Հիւրի.** (*Գլուխը բարձրացնելով ու անուշադիր*): Գու դեռ չե՞ս քեզ... Ի՞նչպէս է Շողիկը:

**ՆԱԶԷ.** Քնեց... լաւ է:

**Հիւրի.** Տա՞ք...

**ՆԱԶԷ.** Աղօթեց ու կամաց կամաց նիւնեց Շողիկի կողքին.

**Հիւրի.** Երկուսն էլ քնեցի՞ն, հա՞, երկուսն էլ... (*Էլի մի բան է ուզում ասել, շուրջն է նայում և լռում, գլուխը բաշ ձգում: Լռութիւն*):

**ՆԱԶԷ.** Հիւրի:

**Հիւրի.** Ի՞նչ է, քո՛յրիկ:

**ՆԱԶԷ.** (*Շեշտակի նայելով նրա աջքերին լռութեամբ*): Գու ինչո՞ւ ես այդպէս այս գիշեր:

**Հիւրի.** (*Միշտ անուշադիր*): Ի՞նչպէս, քոյրիկ:

**ՆԱԶԷ.** Այդպէս... անհանգիստ, յուզուած... Գերս չես գալիս...

**Հիւրի.** Գե, Շողիկը այս գիշեր բոլորիս էլ յուզել է... այնպէս բոլլ է երեխան...

**ՆԱԶԷ.** Ո՛չ, այդ չէ... Շողիկը երեկ գիշեր էլ բոլլ էր, բայց դու այսպէս չէիր: Յիշո՞ւմ ես, մի երեկոյ ես քեզ դարձեալ բաներ հարցրի եւ դու խուսափողական պատասխաններ տուիր: Լաւ արիւ, գուցէ այդպէս էլ հարկաւոր էր: Գաղտնիքներ կան, որոնց համար շքունները երկարի փականք պիտի ունենան: Այն ժամանակից ես շատ ապրեցի, շատ շուր անցաւ կամրջի սակից. գեթ այժմ ասա՛, ո՞ւր գնաց հայրիկի:

**Հիւրի.** (*Շփոթուած*): Հայրի՞կս... չը գիտեմ...

**ՆԱԶԷ.** Չը գիտես... ես գիտեմ... հա, ես գիտեմ, Հիւրի... եթէ գաղտնիքներ կան, որոնց համար շքուններն երկարի փականք պիտի ունենան, արեւ էլ կան, որոնք այդ գաղտնիքները զգում են ու քննարկով ապրում, ինչպէս իրանց սեփական արիւնը, իրանց զարկը: Ես բոլոր



գիտեմ, առանց ֆեզ: Ես գիտեմ, որ դու, հայրիկդ եւ ձեզ հետ եկած ձեր ընկերները վաղուց է, որ դադար չունեք, որ դուք մեր կորած խրճիթների սակ հնազանդութիւնն ու զգուշաւոր խեղճութիւնն եւ անիծում եւ հոգիների մեջ կծիկ կծիկ ֆնած արդար ցատումի եւ վրեժի օձերին զարթեցնում...

**ՀԻՒՐԻ.** (Յուզմունքով բռնում է նրա ձեռքը): Նազե, Նազե, ի՛մ ֆոյրիկ, սուս, սուս, մինչեւ արեալոյս, մինչեւ արեալոյս:

**ՆԱԶԷ.** (Առանց ուշք դարձնելու): ...Ես գիտեմ, որ ձեզ հետ եմ այժմ հարիւրաւոր ըմբոսներ, որ հարբավայրը ծփծփում ու փրփում է ծովի պէս եւ հսկայ փոքորիկը մօտ է պայթելուն...

**ՀԻՒՐԻ.** (Հեւալով): Արեալոյսի համար, Նազե, արեալոյսի համար:

**ՆԱԶԷ.** Ես գիտեմ, Հիւրի (ձայնը ցածրացնելով), որ այն փոքորիկը պայթելու է հենց այս գիշեր, գուցէ այս իսկ ժամին, եւ նրանք գնացին դէպի փոքորիկը... Ո՛հ, այդ փոքորիկը, Հիւրի, որ ես գուրգուրում եմ հոգուս նուիրական խորհրդում, որ երազել եմ իմ սանջանքի գիշերներին, որից ես օրօրներ եմ հիւսել իմ գաւակի համար: Այդ դու գիտիր, Հիւրի, դու տեսնում էիր, Հիւրի, եւ լսեցիր, բողբոջով, որ ես գալարում եմ սեփական վշտի մեջ խայրուած օձի պէս: Բայց այժմ գիտեմ, որ նա գալիս է, այն փոքորիկը, եւ նա կը գա՛յ, նա կը գա՛յ...

**ՀԻՒՐԻ.** Լուռ, լուռ, Նազե, բող խաւարն էլ չը լսի:

**ՆԱԶԷ.** ...Ես գիտեմ, որ սոսկումի գիշերն է... վերջին դասասանը, եւ դու օրհարով սպասում ես այստեղ փոքորիկի առաջին որոտը լսելուն, նա փայլակի առաջին ցոլֆերը տեսնելուն: Ես գիտեմ այս բոլորը, որովհետեւ իմ հոգին միշտ ֆեզ հետ է եղել, նրանց հետ, եւ այժմ ես քն կողմն եմ այս հսկումի ահաւոր եւ քրտմանի գիշերին:

**ՀԻՒՐԻ.** Այո՛, այո՛, Նազե, հսկումի գիշեր է... ի՛նչ լաւ ասացիր... փոքորիկի որոտը... փայլակի ցոլֆերը... (Արեւելքը շտապողմունք է): Նայիր, նայիր, Նազե, տես, երկինքը փայլասակեց... հրդեհ, հրդեհ: Ասա՛, հրդեհ չէ՞ այն...

**ՆԱԶԷ.** (Նայելով երկնքին): Հրդեհ... այո, հրդեհ, հրդեհ:

**ՀԻՒՐԻ.** (Ծայրայեղ յուզմունքով ոտքի է կանգնում և դիմում դէպի այն կողմը, որտեղից աւելի լաւ է երևում բոցավառ երկնքն արեւելքում): Հրդեհ, ասում ես, հրդեհ...

**ՆԱԶԷ.** (Համնում է նրան, սղմում են կողք կողքի և շափշտակուած, հեւալով նայում են երկնքին, որ աւելի ու աւելի էր շտապողմունք) Այո՛, հրդեհ, հրդեհ: (Հստում է խուլ որոտ): Լսո՛ւմ ես խուլ բնիլներ:

**ՀԻՒՐԻ.** (Ականջ է դնում): Պայքարի որոտն է այն, հսկայական պայքարի. հովիտը տեսնում է, եւ երկինքը... ա՛հ, հրդեհն է լիզում նա հակասը... Ո՞ւր է նա: (Վազում է դէպի արագիւր): Դու դեռ այստե՞ղ ես... բոլոր, բոլոր շուտով, երջանիկ բռնուն. տես բոցավառ երկինքը, արեալոյսն է գալիս, քա փնտրած արեալոյսը: (Յետ է գալիս դէպի Նազէ): Նազե, ի՛մ ֆոյրիկ, գնանք այնտեղ... գնանք նրանց յետից, գնանք, հասնենք այն հոյակապ գրոհին, որ այժմ աւերիչ հեղեղի պէս զարկում է նզովեալ շենքի զանգուածին:

**ՆԱԶԷ.** Գնա՛նք, գնա՛նք, Հիւրի. կաց, տեսնեմ ֆնա՞ծ են... (Մտնում է դրանք):

**ՀԻՒՐԻ.** Թո՛ղ ֆնեն, բո՛ղ ֆնեն, Նազե... պատասխան եւ մանուկները, իսկ մենք գնանք, գնանք շուտով:

**ՆԱԶԷ.** (Ականջ է դնում խրճիթի դռնից և լանկարծ ներսից լսում է Փէրիի սարսափելի ձիջը): Վա՛յ, Շողիկ, վա՛յ... (Նազէն դուրը բացում է եւ ներս է ընկնում խրճիթը. Հիւրին մի առժամանակ մնում է քարացած, ձեռները կրծքին)



խաջած, ապա ուղքի գալով, նոյնպէս նետում է ղէպի խրձի՞ծն  
և բեմը մի առժամանակ մնում է պարապ: Նոյն ժամին բակն են  
մտնում երկու գուժկաններ):

### ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԳ

Ա. ԳՈՒԺԿԱՆ. (Զգուշութեամբ առաջանալով): Արի՛,  
այսեղ ե... (Փսիսուկով): Զարհուրանք եմք բերել մեզ հետ...  
մեր ոտերի հետ մահը գալիս է քայլ առ քայլ... Եւ ի՛նչ  
կարմիր է այսօր արշալոյսը, երկինքն արիւն արցունք է  
լալիս... Քնած են... Դու ոչինչ չե՞ս լսում:

Բ. ԳՈՒԺԿԱՆ. Ոչինչ, միայն ծառի ճիւղերը սկսե-  
ցին շարժուել: Ո՞վ է շարժում այս ծառը... Եւ սերեւներն  
ընկնում են արագ-արագ, ու ամեն մէկն ընկնելիս մեղ-  
միւ հեծեծում է:

Ա. ԳՈՒԺԿԱՆ. Որքան ծանր է մահը ման ածել  
խաւարի ու խաղաղութեան մեջ... շուտով, շուտով յայտ-  
նենք... Բիչ է մնում, նշամ եւ ազատուեմ:

Բ. ԳՈՒԺԿԱՆ. Կամա՛ց, կը լսեն:

Ա. ԳՈՒԺԿԱՆ. Պե՛տ է լսեն, հապա՛... Լսի՛ր, ո՞վ է  
այնտեղ:

Բ. ԳՈՒԺԿԱՆ. Ո՞րտեղ:

Ա. ԳՈՒԺԿԱՆ. Ա՛յ, այն ցանկապատի այն կող-  
մում, չե՞ս լսում, մի բան է քայրտում:

Բ. ԳՈՒԺԿԱՆ. (Մտնենալով): Զը գիտեմ, մի անորոշ  
բան է, շարժում է:

Ա. ԳՈՒԺԿԱՆ. Թո՛ղ, հեռացիր... նայիր, ծառը  
դարձեալ շարժուեց... Մի՛քէ մահը մեզանից առաջ է  
հասել այստեղ... Ներսից շուտ չե՞ս լսում:

Բ. ԳՈՒԺԿԱՆ. Հապա մեկ մտեմամ դրանք, սկանջ  
դնեմ:

Ա. ԳՈՒԺԿԱՆ. Ոչ, ոչ, սպասիր, մեկ շունչ առնեմ:  
Ինչպէս յայտնենք անուշի բօքք... Խե՛ղճ պառաւ... վեր-  
ջին տղան է, եւ ի՛նչ տղայ... Ապա՛ն, հա, Ապա՛ն... Իսկ  
աղջի՛կը... օօ՛, ի՛նչպէս յայտնել այս զարհուրանքը, որ  
ժայռի պէս յանկարծ գլխներիս ընկաւ:

Բ. ԳՈՒԺԿԱՆ. Թո՛ղ մտեմամ, սկանջ դնեմ:  
(Շարժում է ղէպի դուրս):

Ա. ԳՈՒԺԿԱՆ. (Թուից բռնելով): Սպասի՛ր, կարծես,  
նիւաղները կուրծիս շանգում են... Ասամներս իրար են  
զարնում... սոսկալի է, սոսկալի՛ է, եւ մեք չը գիտեմք,  
որ անիրաւները դարան են մեզ, որ ռես Մնօն գործում  
է ի՛ր մարդկանցով... Ի՛նչ զոհ տալիմք, ի՛նչ զոհ...

Բ. ԳՈՒԺԿԱՆ. Սկզբում ասեմք, քէ քերես վիրաւոր  
է, քերես վիրաւոր, հա՞ա...

Ա. ԳՈՒԺԿԱՆ. Ի՞նչ օգուտ... հազիւ հետում եր...  
Ի՛նչպէս կարող եմք ծածկել... (Նայում է վեր): Դարձեա՛լ  
ո՞վ է շարժում այս ծառը... չորս կողմներս ման ե...

Բ. ԳՈՒԺԿԱՆ. Սուս, սուս, կարծես քէ մեկը  
դուրս է գալիս: (Դուրս է գալիս Նազն):

### ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՆԱԶՆ. (Մի վայրկեան կանգ է առնում դրան առաջ,  
նայում է անձանթներին, որոնք կծկում են պատի տակ, ապա  
ուղիղ քայլում է ղէպի նրանց) Մեռա՛ւ... գերեզման կը  
փորե՛ք. խորը, խորը, որ էլ այս աշխարհից չը վախե-  
նայ... Եւ այնպէս վախեցում եր...

Ա. ԳՈՒԺԿԱՆ. Օօ՛, արդէն գիտե՛... զարհուրելի է...  
Դիւական դաւադրութիւն էր, եւ առաջին գնդակով նա  
ընկաւ:

ՆԱԶՆ. (Առանց լսելու): Այնտեղ ե... ա՛յ, այնտեղ...  
նրազի պէս մարեց... եւ բաց աչքերով Աստուծոն եր փրկե-



բում, որ չը կա՛յ, չը կա՛յ... (Գամացուկ): Արագիլ չը սա-  
նեք ձեր տուր: (Գուժկաններն իրար են նայում առանց բան  
հասկանալու. Նազէն թողնում է նրանց և շտապով դիմում է  
դէպի պարտեզ, քիչ լետոյ, դուրս է գալիս այնտեղից խեղդում  
արագիլի կոկորդից բռնած և ձջում է բարձրածայն): Հիւրի՛ր...

**ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ**

**ՀԻՒՐԻ.** (Դուրս է գալիս աջքերը սրբելով և տեսա-  
րանի առաջ ձիջ է արձակում): Այդ ի՞նչ արիւ, այդ ի՞նչ  
արիւ:

**ՆԱԶԷ.** (Գիտին է խփում արագիլը, ոտքով տրորում  
և նայում է անթարթ, չոած աջքերով ու կատաղի): Հու՛ււ,  
նզովուած բոչուն... դէհ, այժմ գնանք, Հի՛ւրի:

**ՀԻՒՐԻ.** (Վախեցած և զարմացած նայում է մերթ արա-  
գիլին, մերթ գուժկաններին):

**ՆԱԶԷ.** (Դիմելով գուժկաններին): Գու՛ւր ո՞վքեր եք...  
այնտեղի՞ց եկաք, այն կարմիր երկնքի սակից հա՞ա...  
Այստեղ Շողիկը մեռաւ, իսկ այնտեղ՝ հրդեհ է, այնպես  
չէ՞... Նայեցեք, գնանք, գնանք բոլորս այնտեղ, ուր վրեկա-  
րաւ հրդեհն է որոտում: Գնանք, գնանք, քո՛ղ հագար  
Շողիկ մեռնի, բայց քո՛ղ այն հրդեհը որոտայ, քափով,  
կասաղի, քո՛ղ մեր ցաւի ու անեծքի հողմերը բարբոսն  
նրան, քո՛ղ նա այս նզովեայ աշխարհի գարշանքն ու  
անիրաւութիւնը մոխիր դարձնի... գնա՛նք, գնա՛նք...

**Ա. ԳՈՒԺԿԱՆ.** Ո՞ւր գնանք, քո՛րիկ, նրանք գա-  
լիս են...

**Բ. ԳՈՒԺԿԱՆ.** Բերում են վիրաւորին... հիմայ կը  
հասնեն...

**ՀԻՒՐԻ.** (Յնցուելով): Բերո՞ւմ են... (Նրա թեր բռնե-  
լով): Բերո՞ւմ են, ասում ես... Սպասիւ, սպասիւ: (Կործրը  
բռնելով): Էլ ոչինչ չասես... մի ասիւ, լուր ես ո՛չ մի

խօսք... վախենում եմ... Երգում եր... Օօ՛, ո՞ւմն են  
բերում, դժբախտ, ո՞վ է վիրաւորը...

**ՆԱԶԷ.** Ով ես լինի Հիւրի. բայց հրդեհը սես,  
հրդեհը: Գնա՛նք...

**Ա. ԳՈՒԺԿԱՆ.** Դժոխային դաւ եր, քո՛րիկ, դժո-  
խային դաւ... Մենք չը գիտեցինք... յանկարծ... անտառում,  
քփերի սակից... բնդհարումը զարհուրելի եղաւ, եւ առա-  
ջին գնդակից նա ընկաւ...

**ՀԻՒՐԻ.** Ո՞վ ընկաւ, ո՞վ... ո՛չ, ոչ, մի ասեք, ոչ  
ոքի մի ասեք, պապանձուեցեք... մա՞րդ էք դուք, քե՞  
ման մանածողներ. մարմին ունե՞ք: (Շօշափում է): Ո՛ւհ,  
դժոխք, կայծակ, մերիկ, ժանտախտ, ո՞րն էք դուք...  
ասացե՛ք... Ո՛չ, լո՛ւ... չը խօսեք: Երե՛ դուք խօսեք, այն  
երկիւնքը կը գունասուի... ետաւարը դողում է ձեր լու-  
քիւնից... Խօսեցեք, խօսեցեք, ես այլու՛մ, խեղդում եմ,  
կամ լուծուեցեք խաւարի մեջ, չհացեք գիշերուայ մեջ,  
կամ ասացե՛ք շուտ, ո՞վ է վիրաւորը: Ձեր լուքիւնն էլ,  
ձեր խօսքն էլ սուր դանակներ են, որ սիրս են մխում...  
Մահն է քառել ձեր շրթունքներին. ես այդ տեսնում եմ...  
Սիրս բրօնզ կը շինեմ եւ հոգիս կու՛ռ պողպատ... աչքե-  
րիս արցունքի աղբիւրը կը ցամաքեցնեմ եւ ցաւիս նիչը  
կը խեղդեմ ասամներիս սակ՝ ձեզ լսելու համար: Ասա-  
ցե՛ք, ո՞վ ընկաւ...

**Բ. ԳՈՒԺԿԱՆ.** Ասա՛նք, քո՛րիկ... Ասա՛նք...  
ձանք... մահամերձ...

**ՀԻՒՐԻ.** (Լուռ նայում է շտապողնած երկնքին):

**ՆԱԶԷ.** Փորորիկն եկաւ եւ ամենամեծ կաղնին  
ընկաւ... եւ երկիւնքը գունասուում է... (Ներս են մտնում  
վեց եղերամայրեր սև երկար քողերով ծածկուած և կարգով ու  
լուռ շարում են ծառի տակ):

**ՏԵՍԱՐԱՆ ԵՐԹԵՐՈՐԴ**

**ՀԻՒՐԻ.** (Սոսկումով նայում է եղերամայրերին): Օօ՛,



ես ձեզ հանաչում եմ, լալկա՛ն մայրեք, գեբեզմաններո՛ւմ, գեբեզմաններո՛ւմ... Ձեր ոսկերից կարկրում է գեբեզմանների դեղին փոշին... Սգալո՛ւ եկա՛մ... Ի՛նչպես պիտի սզա՛մ հոգիների այն հսկայ վարպետին, որ՝ գիտեք խաղաղ ծովերում մերիկ հանել, որի՛ հեւէր հազար-հազարների քափ ու յոյզ էր սալիս, որի բռուցցի՛ սակ բռնութիւնն էր սնում էւ այ՛ների մեջ ազատութիւնը փայլասակում: Ասացե՛ք, ի՛նչպես պիտի սզա՛մ նրան, հողմերից հառաչանք էւ լացող գիւղերից վիշտ խլե՛լ է՛ք նրա սուզը հիւսելու համար:

ԵՂԵՐԱՄԱՅՐԵՐ. (Միասին):

- „Գիւղերներն են լալիս, հողմերն են սնում,
- „Այս գոռ փոքորկի ահաւոր ժամին
- „Վիրաւոր արծիւը ժայռին չը հասաւ.
- „Որբացած ժայռի երկնաբերձ կասարին
- „Գիւղերներն են լալիս հողմերն են սնում,
- „Եւ վիրաւոր արծիւը ժայռին չը հասաւ“:

**ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԿ**

**ՓԷՐԻ.** (Տեսնելով եղերամայրերին և զուժկաններին, բարացած կանգ է առնում. տիրում է խորին լուռութիւն. ապա բացում է բակի դուռը, ներս են բերում վիրաւոր Ասլանին կանաչ ոստերից հիւսուած պատգարակի վրայ և դնում են ծառի տակ, Թմբի վրայ: Յետեից ներս է թափում մեծ քաղմութիւն, մարդիկ ու կանայք: Փէրին ձջում է ու նետում դէպի Ասլանը, բայց ընկնում է ձկների վրայ ուժասպառ. նրան բարձրացնում, հասցնում են Ասլանին): Կուրացե՛ք այ՛ե՛ր...


**ՀԻԻՐԻ.** (Անշարժ, զոռնատ ու լուռ նայում է տեսարանին, ասես առանց բան հասկանալու: Լուսարաց է):

**ՆԱԶԷ.** (Մտտնում է Ասլանին և աչքերը լառում նրա դէմքին, ուր խաղում են արշալոյսի առաջին ցուլքերը):

**ԱՍԼԱՆ.** (Աչքերը դարձնում է չորս կողմը ասես մէ-

կին փնտրելով և ապա նայում է դէպի արշալոյսը): Ի՛նչ լաւ է արշալոյսը... այն միւսը չը կա՛յ... Մա՛յր, քաղիւր է այս գաւակիդ... մայրերը շատ պիտի քաղեն, մինչեւ կը գայ այն միւսը... Հիւրի՛, Հիւրի՛... ազատութեան պատանդանը զարհուրանքից ու արիւնից է շողախում, ի՛մ արիւնից... շատերի՛... շատերի՛... (մտնում է լուռ մն հեծկտանքներ):

**ՀԻԻՐԻ.** Ի՛նչ եղաւ արշալոյսը... ի՛նչ ցուրտ է... (Եղերամայրերին): Այժմ նա ձերն է. եք հազար տարի սզա՛մ ու գովքն անե՛ք, դարձեալ ֆիչ է... Հա՛յր, հոգիս ժեռ ֆաւր կը շինեմ, էւ սիրս՝ գրանիս. ցաւիդ սեւ ալիքները այսունեսեւ կը փռուեն հոգուս վրայ էւ կսկիծիդ նետերը էլ չեն կարող խոցել կարծրացած սիրս... Ես չեմ լայ, մայրերն են լալիս, որոնց ոսկերից կարկրում է գեբեզմանների դեղին փոշին. այդ բաւական է... Տառապանքի սեւ ծովի մեջ քո՛ղ կուլ գնայ էւ ի՛մ սերը, էւ ի՛մ կեանքը, բոլորի կեանքը, որպէսզի ծագի ա՛յն արշալոյսը, ա՛յն արեւը... Եւ նա կը ծագի՛, կը ծագի՛... Հա՛յր, հա՛յր (Ընկնում է հոր վրայ):





Faint, illegible text visible through the paper, likely bleed-through from the reverse side of the page.



ՀՀ Ազգային գրադարան



NL0328498



Տպագրւում է Վ. ՓԱՓԱԶՆԱՆԻ Երկերի ժողովածուն:

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

Պրակ' Баку, Совѣтъ сѣзда. Е. Ф. Тагіаносянъ.

891.99

Պ-42